

# ՏՈՒՆԻՆԻԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ԱՐԱՄ ԲՈՍՅԱՆ



Handwritten mark and stamp in the top right corner.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A 85079

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

**ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱՅ**

(առաջադիվ և իրականություն)



Հայաստանի ՀՀ ՊԱՍ

Արևելադիցուսության ինստիտուտի

Պիտանական Թարգմանի սրահում



Գիրքը հրատարակվում է  
Արմէն և Բերտարէ Շերենճեանի Հիմնադրամի (ԱՄՆ)  
մեկնանամթիւմը



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

947.925

ARAM KOSSIAN

**THE "HOUSE OF TORGOM"**

(myth and reality)

YEREVAN - 1998

*This book is recommended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies, NAS Armenia.*



*This Publication was made possible by*  
**ARMEN AND BERSABE JEREJIAN FOUNDATION INC.**  
**USA**



## ՆՈՒՐԱՆԻՆԻ ԵՎ ՆՈՒՐԱՆԻ ԳՍԱՆԻՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՄՈՒՆԵԼԻՆ:

*«Այս Հայկ որդի թողյանայ, որդայ թիրառայ, որդայ  
Գամերայ, որդայ Զարեհի, նախնի Հայաստաննայ, և  
այս ազգս նորա և ծնունդս և աշխարհ ընկալարեան  
նոցա, և յարժ նեաւ սրտան, աւս, բազմանայ և լնայ  
զեղկիցն»:*

*(Մովսէս Խորենացի, Պատմութեան Հայոց,  
Գիրք Առաջին, ԺԲ Է-11)*

## ԱՆՄՈՒՓՅՈՒՆ

Հայոց էթնոզենեզի «թորգոմյան» վարկածը իր մեջ պարունակում է հայ ժողովրդի կազմավորման և հայոց պետականության ձևավորման փուլի մի կարևորագույն օղակ, որն առայժմ ստվերված է առկա տարաբնույթ սկզբնաղբյուրների (գրավոր, հնագիտական, առասպելաբանական և այլն) միջև անբավարար քանակի մերձեցման կետերի առկայության պարագայով: Ատվածը առսջին հեղինակն վերաբերում է ժամանակագրական և անվանաբանական քարտուրյուններին: Անտիկ և միջնադարյան հեղինակների ելկերում հին Առաջավոր Ասիայի պետությունների պատմության իրադարձությունների բվագրումը միայն առանձին դեպքերում է համապատասխանում վերջիններիս սեփական աղբյուրների վրա հենվող բվագրումներին: Հաջորդ, նույնքան կարևոր է հայկյանների անունների (համապատասխանաբար, դրանց տակ բաքնված պատմական անձանց) համադրման խնդիրը Հայկական լեոնաշխարհին առնչվող այլ աղբյուրներով վկայված անունների հետ: Այս և զանազան այլ խոչընդոտների հետևանքով դժկար է առանձնացնել վստահելի մեկնակետեր պատմական իրադարձությունների և անձանց զործունեության բվագրման համար:

Հայոց մատենագրության մեջ, սկսած Մովսէս Խորենացուց, Հայկ նահապետը կոչվում է «Թորգոմի որդի», իսկ հայ ժողովուրդը՝ «ազգն թորգոմայ»: Սակայն այսքանով սահմանախակվում են «Տուն Թորգոմայի» վերաբերյալ պատկերացումները: Ի

տարբերություն Հայկի և նրա սերունդների (հատկապես առաջին հայկյանների), որոնցից յուրաքանչյուրի անվան հետ կապվում են որոշակի իրադարձություններ, թորզումն ակնհայտորեն չի դիտվում որպես պատմական անձ: Նա նույնիսկ նահապետ չէ, քանի որ առաջին նահապետը Հայկն է: Թորզումը ոչ միայն նահապետ չէ, այլև որևէ մասնակցություն չի քերել Հայկական լեռնաշխարհի յուրացման գործում: Ո՛չ Պատմահայրը, ո՛չ էլ մյուս մատենագիրները որևէ կերպ չեն անդրադարձել հետևյալ հարցերին. 1) Հայկական լեռնաշխարհի որ հատվածում է գտնվել թորզումի տոհմի բնակության վայրը, 2) երբ և ինչ պայագաներում է թորզումի որդի Հայկը հայտնվել Ռաբելոնում (= Սիջազնադում)՝ Բեյի ափապետության տակ:

Ակնհայտորեն, «Տուն թորզոման» պիտի մտար գործեր հայոց մատենագրություն Աստվածաշնչի միջոցով: Այսպես, վերոնիշյալ հարցերը որևէ կերպ կմեկնաբանվեն կա՛մ Խորենացու, կա՛մ նրան հաջորդած հեղինակների կողմից: Ինչպես է պատկերացվել «թորզոմյան» վարկածը պատմագրության մեջ:

Նկատի ունենալով հայկական էքնոսի գլխի աղերսները վերիննախառայան տարածաշրջանի հետ՝, մասնագետները, սկսած Ֆր.Ի.կիլից՝, ավանդաբար հանգամ են եղել նույնացնելու «Տուն թորզոման» անդրեփրատայան տարածաշրջանում դեռ մ.թ.ա. II հազարամյակից հիշատակվող Թա/եզարտա (ասորեստանյան թիլգարիմնու) քաղաքի հետ: Մանավանդ, որ հայոց մատենագրության «Տուն թորզոման» բառացիորեն կրկնում է Աստվածաշնչում հիշատակվող Bet-Togarma-ն՝:

Ըստ Հ.Մանանդյանի՝, վաղ հայկական ցեղերը մ.թ.ա. XII դարում Հյուսիսային Բալկաններից տեղաշարժվել են դեպի Արգնու լեռան շրջակայքը (Կեսաբլիա-Գյուրյուն-Մալաբլիա), բնակվել են այստեղ շուրջ վեց դար, որից հետո շարունակել են շարժումը դեպի Հալիսի ակունքների շրջանը և Հայկական լեռնաշխարհ՝: Այս տեսակետը առկա է նաև Ի.Վյակոմովի մոտ՝:

Գր.Վափանցյանի կարծիքով՝, Խեթական տեբրության անկումից հետո (մ.թ.ա. XII դարի սկիզբ) Հայաստայի տարածքից սկսվել է հայալեզու տարրի աստիճանական տեղաշարժը դեպի

անդրեվրաստյան Մելիկ և Թեգարամա (Մալաթիայից Կեսարիա ընկած շրջանը), որը հատկապես լայն ծավալ է ընդունել մ.թ.ա. VII դարում կիմմերների ճնշման տակ:

Ս.Երեմյանը գտնում էր<sup>1</sup>, որ Աստվածաշնչային Բեթ-Թոգարման (= Տուն Թորգոմայ) հետագայի հայկական Փոքր Հայքն էր՝ ավելի փառ շրջանի Հայաստան և ուրարտական ազրա Ռուսա II-ի մի արձանագրության մեջ հիշատակվող Խաթե երկիրը<sup>2</sup>: Այսինքն, հեղինակը հավասարության մշան էր դնում անդրեվրաստյան Մելիկ-Մալաթիայից արևմուտք ընկած Թեգարամա-Թիլ Գարիմուի և ակնհայտորեն ավելի խոշոր քաղաքական միավորների միջև, որը հնադարից չէ կիմնավորել:

Այսպիսով, վերտիչյալ հեղինակները, բացառությամբ Ս.Երեմյանի, որը «Տուն Թորգոման» նույնացնում է Հայաստան-Փոքր Հայքի հետ, Հայկի նախնիների երկիրը տեղադրում են անդրեվրաստյան գոտում, այնտեղ, որտեղ դեռևս Աշշուրի առևտրական գաղութների գոյության շրջանից (մ.թ.ա. XX-XVIII դդ.) սեպագիր աղբյուրները հիշատակում են Թեգարամա քաղաքը<sup>3</sup>:

«Տուն Թորգոմայի» տեղադրման, այստեղ հայալեզու ցեղերի հայտնվելու ժամանակի և եղանակի, այնուհետև դեպի այսրեվրաստյան շրջաններ տեղաշարժի առնչությամբ անկա տարակարծությունների հիմքում ընկած են երկու ելակետային դրույքներ:

1) Մինչև մ.թ.ա. XII դարը Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորները (հետևաբար, նաև՝ բնակչությունը) չէին կարող հայալեզու լինել: Պրոտոհայկական ցեղերի մուտքը Լեռնաշխարհ սկսվել է մ.թ.ա. XII դարում, այսինքն, Խեթական տերության անկման շրջանում կամ նույնիսկ ավելի ուշ<sup>4</sup>, և միայն մի քանի դար հետո է սվարտվել դրա հայացումը:

2) Հնդեվրոպալեզու (նաև՝ հայալեզու) էթնիկական տարրը ատկա է եղել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակում և նույնիսկ ավելի փառ<sup>5</sup>: Մասնավորապես, հայալեզու բնակչություն կարող էր ունենալ խեթական աղբյուրների Հայաստան-Ազգին Լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում<sup>6</sup>:

Վերջին տարիներին վերտիչյալ մտտեցումներից երկուսը



ակնհայտորեն սկսել է գերակշռել շնորհիվ Հայկական էտնաշխարհի տարբեր շրջաններից ի հայտ եկած հարուստ հնազնիսական նյութերի<sup>15</sup>։ Վերջիններս վկայում են այն մասին, որ առնվազն մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին այստեղ պարզորոշ նկատվում են էթնոշակութային տեղաշարժեր, սակայն միայն Էտնաշխարհի ներսում. օտար մշակույթի կողմերի քիչ քան շատ զգալի ներթափանցում մ.թ.ա. II հազարամյակի վերջերին գրանցված չէ։

Մ.թ.ա. II հազարամյակի գրավոր աղբյուրներում կիչատակվող մի շարք քաղաքական միավորներում հայալեզու էթնիկական տարրի առկայությունը պնդող մասնագետների կարծիքով, մ.թ.ա. XII դարից սկսած ընթանում է դրա աստիճանական տարածումը Էտնաշխարհի տարբեր շրջաններ, մի պրոցես, որը լայն բառի սլոնի տուսնար մ.թ.ա. VIII-VI դարերում, Ռուստուրի բուլաջանսն և անկման փուլում։ Այս տեսակետը՝ ընդհանուր գծերով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ։

Խեթական տեղութային անկման շրջանում Հայաստ-Ազգիի տարածքից սկսվել է հայալեզու ցեղերի շարժում երկու ուղղությամբ՝ ա) հարավ (Մալաթիա, այնուհետև Տավրոսի շրջան մինչև Հյուսիսային Միջագետք), ք) արևելք (սապագայի Ուրարտու)։ Այս տեղաշարժերի՝ ժամանակագրորեն ամենավաղ փուլի արտացոլումը Ասորեստանի արքա Թիգլաթաշառասար I-ի (1114-1077թթ.) կիչատակված մուշկերի, կասկ-ասիլյուրների և ուրումների տեղաշարժերն էին։ Գր. Գալիան-գյանի կարծիքով, միջնադարյան հայոց մատենագրության մեջ կիչատակվող «Տուն Թորգոնայի» կապը Հայկ նահապետի հետ իր մեջ պարունակում է դեպի Մալաթիա և դրանից արևմուտք ընկած շրջաններ հայկական ցեղերի կիչալ տեղաշարժի մասին վերհուշը<sup>16</sup>։ Այսպիսով, հեղինակը արևելյան Փոքր Ասիայի հայալեզու բնակչություն էր մ.թ.ա. XII դարով և դրանից հետո ընկած ժամանակաշրջանով, դիտելով այն որպես կյուսիսից եկող էթնիկական ինֆիլտրացիայի արդյունք։

Ավելի ուշ, 1960-80-ական թվականներին, Փոքր Ասիայի տարածքում հայկական էթնոսի և համապատասխան պետական կազմավորման գոյության խնդրին անդադարձավ

Ի.Մ.Նյակոնովը: Նրան է պատկանում անդրեպիտոյան շրջաններում հայկական էրևոսի կողմից ստեղծված վաղ պետականության գոյության խնդրի առաջին հանգամանակի հետազոտությունը: Ընդունելով այստեղ մ.թ.ա. XII դարում հայալեզու տարրի ներքախանցման մասին տեսակետը, նա, ի տարբերություն Գր.Նախանջյանի, նախահայերի (ըստ հեղինակի՝ «արևելյան մուշկեր») ելակետը տեսնում էր ոչ թե Հալասա-Ազգիում, այլ Հյուսիսային Բալկաններում, արևելյան Փոքր Ասիայում նրանց հայտնվելը դիտելով Խեթական տերության անկման փուլում ընթացած էթնիկական լայն տեղաշարժերի համատեքստում: Ըստ Ի.Նյակոնովի, Մելիդ-Թեգարամայի տարածքում հայկական տարրը կարող էր իշխանության գալ մ.թ.ա. VIII դարի վերջերին - VII դարի սկզբներին, այստեղ մինչ այդ գոյություն ունեցած լուվիական պետության արքայատոհմի վերացումից հետո<sup>14</sup>: Նա ենթադրում է, որ Ասորեստանի և Ուրարտուի անկումից հետո այս արդեն հայկական քաղաքությունը («թորզոյան դիմաստիա»), հավանաբար, պիտի ընդարձակվեր, նեղատնելով Արմե-Շուրրիան և Ուրարտուի կենտրոնական շրջանները:

Վերը բերված տեսակետներում մեկ սկզբունքային տարածայնության (ուսյալեզու ցեղերի ելակետը մինչև Փոքր Ասիա հասնելը) հետ մեկտեղ կան ընդհանրություններ (ուսյալական էրևոսի հետագա ծավալում դեպի արևելք, որի արդյունքում Ուրարտուի տարածքը հայացել է):

Անկախ այն հանգամանքից, թե ինչպես և երբ կարող էր ընթանալ հայալեզու տարրի աստիճանական ներքախանցումը Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններ, ակնհայտ է, որ Նսիպատից արևմուտք ընկած տարածքը՝ Մելիդ-Թեգարամա (հետագայի Փոքր Հայք), կարևորագույն դեր պիտի խաղար հայկական էրևոսի և պետականության կոնսոլիդացիայի գործում, որպեսզի հետագայում հայոց ինքնագիտակցության մեջ արմատավորվեր նախահայր Թորգոմի և նրա հետնորդների մասին վերնուշի տեսքով: Հետևաբար, վերոհիշյալ աշխարհագրական տարածքի էթնոքաղաքական պատմությունը հանգամանակի ուսումնասիրման կարիք ունի: Նրբ և քաղաքական ինչպիսի

ենթատեսչառամ կարող էին հայտնվել գեղերը հայանվել Եվրառի աջակնյակում և հասնել քաղաքական գերիշխանության, և որ քաղաքական միավորը կարող էր հանդիսանալ «Տան թորգամայի» նախատիպը: Արդյոք վերջինս վկայված է էին Առաջավոր Ասիայի համաժամանակյա գրավոր աղբյուրներում:

Ներկա աշխատության մեջ կներկայացվեն՝

1) Խեթական տեղության տրոհումից ինտո Մելի-Թեգասամայի շրջանում ձևավորված նախեթական (կամ լուվիական) քաղաքական կազմավորումների անկման փուլի հանգամանակի պատմությունը;

2) Արևելյան Փոքր Ասիայում մ.թ.ա. VIII դարի վերջին տասնամյակներում սկիզբ առած էթնոքաղաքական գործընթացները, որոնք պիտի հանգեցնեին նոր քաղաքական միավորների ձևավորման:

3) Առաջին հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհի յուրացման խնդիրը:

Վերոնիշյալ խնդիրների ուսումնասիրության հիմքի վրա վորձ կարվի նորովի մեկնաբանել հայոց մատենագրության մեջ դեռևս ծորենացու ժամանակներից արմատացած «թորգոմյան» վարկածը:

## ՄԵԼԻԴ-ԹԵԳԱՐԱՄԱՆ Մ.Թ.Ա. XII-VIII ԴԱՐԵՐՈՒՄ

Խեթական տեղության անկման նորագույն «սյոսհման» տեսության համաձայն<sup>17</sup>, այն հետևանք էր առաջին հերթին դեռ մ.թ.ա. XIII դարի կեսերից երկրի ներսում տարեցտարի խորացող ներքաղաքական անկայունության, որ գլխավորապես բացատրվում է Մուրափիա II-ի դինաստիայի երկու ճյուղախորանների միջև մշտապես ընթացող հակամարտությամբ, սկսած Խաթրուափիա III-ից: Մ.թ.ա. XII դարի սկզբներին ներքաղաքական վաշիվելումների, տնտեսական լուրջ բարդությունների (երաչտ, սով) և կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության մի զգալի մասի զանգվածային արտագաղթի հետևանքով Խեթական տեղությունը տրոհվեց երեք քաղաքական միավորների՝ Քաթրուստաստան՝ Փոքր Ասիայի հարավում, Կարգամիսը՝ Հյուսիսային Միդիայում և Մելիդը՝ արևելյան Փոքր Ասիայում:

Մելիդում, Խաթրիի տրոհումից անմիջապես հետո խեթա-լուվիական դինաստիայի կողմից կառուխարվող բազալիտության առկայությունը, ինչպես նաև այս տարածքում մ.թ.ա. XII դարի ընթացքում աղետալի հետևանքներ ունեցող ճգնաժամային երևույթների (ապարնակեցում, խոշոր ավերածություններ, քաղաքային մշակույթի անկում) համեմատաբար վաղը ազդեցությունը բույլ են տալիս ենթադրելու, որ Վերին Եփրատի աջափնյա հատվածում էրնոմշակութային բնույթի նկատելի վտիտություններ չէին կարող տեղ գտնել: Համեմայնելիս, այս տարածաշրջանի երկու կարևոր կենտրոն-ներում՝ Արսլանբեփի-Մարափայում և Կարափոյուք-Էրփատամում ուշ քրոնոլոգի վաղ երկարի վուլ անցումը տեղի է ունեցել խաղաղ առանց ավերածությունների և օտար մշակույթի նկատելի ներթափանցման<sup>18</sup>: Կնշանակի, որ երե նույնիսկ մ.թ.ա. XII դարի էրնիկական տեղաշարժերը (տեղական բնակչության մասնակի

արտագարք կամ ելքի քննակրթության ներքոյ) չեն շրջանցել Մելիդ-Քիզարաման, ապա առնելով զգալի ազդեցություն չեն ունեցել տարածաշրջանի էրնոքադարական և մշակութային իրավիճակի վրա: Ասվածը աներկբայորեն վկայում է հոգուտ այն ենթադրության, որ Մելիդի պետությունը Խեթական տեղության քաղաքական-մշակութային ժառանգորդներից մեկն է եղել:

Այժմ համառոտակի ուսումնասիրվող տարածքի՝ մ.թ.ա. XII-VIII դարերի քարտեղական պատմության մասին:

Վերջին շրջանում ի հայտ եկած գրավոր աղբյուրների շնորհիվ պարզվում է, որ Խաբբիի սրտեռնից հետո Մելիդում ձևավորված բազալտոլորության առաջին դինատիան (մ.թ.ա. XII-XI դդ.) Կարգամիտի արքայատոհմի մի ճյուղավորումն էր<sup>20</sup>:

Արդեն մ.թ.ա. XII դարի երկրորդ կեսին Մելիդը քաղաքական մեծ ակտիվություն է ցուցաբերում, նրա արքաների բողած հիերոպոլիտային արձանագրություններում<sup>21</sup> հիշատակվում են արշավանքներ, որոնք գերազանցապես ուղղված էին դեպի արևմուտք: Այս արշավանքների շնորհիվ Մելիդի տարածքը զգալիորեն ընդարձակվում է, ընդգրկելով ժամանակակից Էրջիյաս լեռան (անտիկ աղբյուրների Արգեսոս) շրջանը՝ Կայսերի-Կեսարիայի մոտ<sup>22</sup>: Այնուհետև, մ.թ.ա. IX դարի կեսերից, գրավոր աղբյուրների տրության պատճառով, մեր տեղեկությունները Մելիդի վերաբերյալ խիստ բերի են: Այս նույն ժամանակներից Մելիդի բազալտոլորության հետագա պատմության վերաբերյալ տեղեկությունները գեղազանցապես զալիս են Ասորեստանի արքաների արձանագրություններից:

Սալմանասար III-ի օրոք (858-824թթ.) սկսվում է Ասորեստանի աննախադեպ ուսգմարադարական ակտիվությունը արևելյան և հարավային Փոքր Ասիայում: Մ.թ.ա. 844թ. Սալմանասարի արշավանքը դեպի Մելիդի հարակից շրջաններ ստիպում է վերջինիս արքա Լալլին հարկատու դառնալ Ասորեստանին<sup>23</sup>: Մի քանի տարի անց՝ 836թ. ասորեստանյան զորքը դեպի Քուրալ (Մելիդից արևմուտք) արշավելիս գրավում է Մելիդի սահմանային Ռեռուշ ամրոցը, Լալլին կրկին անգամ հալառում է իր լոյսալորությունը՝ հարկ առաքելով Ասորեստան<sup>24</sup>:

Սալմանասար III-ից հետո, մ.թ.ա. IX դարի վերջերից սկսվում է Ուրարտուի առաջխաղացումը դեպի վերինելիզառյան տարածք-ներ: Նախ Մեմուան<sup>2)</sup>, այնուհետև Արզիշտի I-ը<sup>3)</sup> արչականքներ են ձեռնարկում Մելիդի դեմ: Հատկապես հաջող էր Արզիշտիի 783թ. արչականքը, որի ընթացքում ուրարտական զորքը կտրում-անցնում է Մելիդի տարածքը արևելքից-արևմուտք, հասնելով թաքալ (տեքստում «Տուատեխի երկիր»): Արզիշտիի օրոք Մելիդը վերածվում է Ուրարտուից կախյալ պետության, մի բան, որ վկայված է նաև Սարգուրի II-ի օրոք<sup>4)</sup>:

Այս ենթաբաժնում բերված նյութերից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1) Խեթական տերության տրոհումից հետո Մելիդում ձևավորվել էր ինքնուրույն պետություն, որը շարունակել է խեթական պետականության քաղաքական և մշակութային ախանդույթները:

2) Մ.թ.ա. XII-XI դարերի ընթացքում Մելիդի տարածքը նկատելիորեն ընդարձակվել է նրա արջանների ակտիվ արտաքին քաղաքականության հետևանքով:

3) Մ.թ.ա. IX դարի կեսերից սկսվել են արուսիներ քաղաքական բարդություններ, կապված նախ՝ Ասորեստանի, այնուհետև՝ Ուրարտուի նվաճողական քաղաքականության հետ: Արզիշտի I-ի օրոք Մելիդն ընկել է Ուրարտուի քաղաքական ազդեցության ոլորտը:

## ՄԵԼԻՆԸ Մ.Թ.Ա. VIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԻՆ

Այս ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում տեղի ունեցած գլխավոր իրադարձությունը երկու խոշորագույն տեղությունների Ասորեստանի և Ուրարտուի մրցակցությունն էր արևելյան Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի նամար<sup>2</sup>։ Թիզբարսպալատար III-ի (744-727թթ.) գահակալմանը նախորդող տասնամյակներում Ասորեստանում տիրող ներքաղաքական անկայունության և Ուրարտուի արտաքին քաղաքական մեծ ազդեցության հետևանքով վերջինիս իստողվեց իր շուրջը համախմբել դեռ Մալմանատար III-ի օրոք Ասորեստանից կախյալ հյուսիսսիրիական և փոքրասիական երկրները։ Մ.թ.ա. 743թ. Քիչտանի և Խալպիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանյան զորքին դիմակայում էին Մալուրի II-ը իր դաշնակիցներով՝ Մելիդը, Կամմուխը, Գուրգունը և այլք<sup>3</sup>։ Այս իտղբանակից հետո Թիզբարսպալատարը ձեռնարկեց Սիրիայում և Փոքր Ասիայում Ասորեստանի կորցրած քաղաքական ազդեցության վերականգնման գործը։ Ուրարտուի պայտույթունից հետո Մելիդը և բարսպալան պետությունները ստիպված էին բնդունելու Ասորեստանի գերիշխանությունը<sup>4</sup>։

Ասորեստանի փոքրասիական քաղաքականության մեջ որակական նոր փուլ սլիտի իսմարեղ Սարգոն II-ի (721-705թթ.) գործունեությունը։ Նրն Թիզբարսպալատարը սանձանավակելում էր միայն քաղաքական գերիշխանության հաստատումով, պահպանելով տեղական արքայատոհմերի իշխանությունը<sup>5</sup>, սակա այլ էր Սարգոնի ծրագրերը, որը հանգում էր հետևյալին։

Սարգոնը ակնհայտորեն ձգտում էր վտիտիսել ժողովրդագրական իրավիճակը, ինչը կատարվում էր մի շարք կտրուկ միջոցառումների իսմարելումով.

1) տեղական արքայատոհմերի և ազնվականության իրավիճակն բնաջնջում կամ բոնի վտիտաղում Ասորեստան։

2) նարիտեուտային վարչակազմի ստեղծում կամ ուղղակի ենթակայություն՝ ասորեստանյան կառավարչի գլխավորությամբ։

3) Ասորեստանից սեմական քնակչության քնակեցում փոքրասիական երկրներում:

Նման քաղաքականության գլխավոր դրսևապատճառ պիտի համարել այս ժամանակաշրջանում Ասորեստանի խիստ լաղկած փոխադարձությունները Ուրարտուի և արևմտակենտրոնական Փոքր Ասիայում տարեցտարի հզորացող Փոյուզիայի հետ: Վերջիններս օգտագործում էին Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի լուսիական և արամեական պետություններին ի պատասխան հակաասորեստանյան քաղաքականության: Սարգոնի տեքստերում բազմաթիվ հիշատակություններ կան Ուրարտուի և Փոյուզիայի հետ վերսիչյալ երկրների ունեցած դաշնակցային հարաբերությունների վերաբերյալ<sup>2</sup>:

Սարգոնի փոքրասիական քաղաքականության մեջ վերոհիշյալ ծրագրի առաջին դրսևորումը բարալյան ամենահեռավոր երկրներից մեկի՝ Շինուխտուի (Հալիսի մեծ ոլորանից հարավ-արևմուտք՝ ժամանակակից Ալտայայ քաղաքի շրջանում) նկատմամբ կիրառված միջոցառումն էր: Մ.թ.ա. 718 թ. վերջինիս արքա Կիյակվին մահապատժի ենթարկվեց, ազնվականությունը բռնի բշվեց Ասորեստան, իսկ երկիրը հանձնվեց բարալյան մեկ այլ պետության՝ Առունային<sup>3</sup>: Փաստորեն, Շինուխտուն, որպես քաղաքական միավոր, վերացվեց:

Նույն թվականին գահընկեց արվեց Թարալի առավել աչքի ընկնող քաղաքական միավորի՝ Բիթ-Բուրտատաշի արքա Խուլլին (հիելոզգլիային աղբյուրներում Խուլիս): Նրա փոխարեն արքա եղակվեց Ամբ(ա)րիսը, որին կնության տրվեց Սարգոնի դուստր Ախատ-Աբիշան<sup>4</sup>:

Սակայն նշված միջոցառումները ցանկալի արդյունքի չհանգեցրին, որը կարելի է բացատրել ուրարտա-փոյուզական գործոնով: Միայն մ.թ.ա. 714թ. Սարգոնի հայտնի արչավանքից հետո դեպի Ուրարտու<sup>5</sup>, ինչպես նաև դրանից մեկ տարի առաջ Փոյուզիայի արքա Միտայի պարտությունից Կռեի ասորեստանյան կառավարչի կողմից<sup>6</sup>, Ասորեստանը հնարավորություն առացավ գրավելու փոքրասիական գործերով:

<sup>1</sup>Նաանելով գրավոր աղբյուրներից, մ.թ.ա. 713թ. նախօրեին



վաւարենն ողջ հարավ-արեւելյան Փոքր Ասիան, բացի ասորեստանյան մարզի վերածված Կունից, դուրս էր եկել Սարգոնի վերահրաւորութեամբ: Մ.թ.ա. 713թ. Սարգոնը գրավեց Բիթ-Բուրտուաշը և նրա արքա Անթ(ա)րխին իր 500 մերձավորների հետ միասին վոխտարեց Ասորեստան<sup>77</sup>. երկրի կառավարման գործը հանձնվեց Ախատ-Արիշային: Նույն թվականին գահընկեց արվեց Մելիդի արքա Գունգվնանին և վոխտարեց նշանակվեց Թարխտնագին<sup>78</sup>: Մեկ տարի անց՝ մ.թ.ա. 712թ. Թարխտնագին նույնպես գահազրկվեց և Մելիդի սալամբի մի մասը՝ մայրաքաղաքով հանդերձ, ինչպես 718թ. Շինուխտուն, կցվեց Տավրոսից հարավ գտնվող մեկ այլ բազավորության՝ Կոմմուխին (անտիկ աղբյուրների Կոմնագենն)<sup>79</sup>:

Առաջին տարախորությունը կարծես այն է, թե այս միջոցառումների հետևանքով Ասորեստանը ապահովել էր գերիշխանությունը իր վտրբախական տիրույթների մեջտեմամբ: Մելիդը և Շինուխտուն որպես քաղաքական միախորներ այլևս գոյություն չունեին, Բիթ-Բուրտուաշը կառավարվում էր Սարգոնի դստեր կողմից, Տուխանան (իլիերոկլիդային աղբյուրներում Տուվանա) դեռ Թիզարապաղատար III-ի ժամանակներից ալանդարար յոյակ էր Ասորեստանի հանդեպ, Խիլակկուն մ.թ.ա. 718թ. կցված էր Բիթ-Բուրտուաշին որպես Ախատ-Արիշայի օժիտ, իսկ Կունն մեծ լիազորություններով օժտված ասորեստանյան վոխտարչայի նստավայրն էր: Փաստորեն, քաղաքյան երկրներից միայն երկուսն էին գտնվում Ասորեստանի անմիջական տիրապետությունից դուրս կամ, համեմայնդեպս, կիսանկախ վիճակում Առունան և Իշտունդան (այս մասին հանգամանորեն ստորև): Բացի այդ, տվյալ ժամանակահատվածում Փոյուզլիայի հետ քարիդղացիական կայսրերություններ էին հաստատվել<sup>80</sup>:

Սակայն հետագա իրադարձությունները վկայում են այն մասին, որ Սարգոնի քաղաքականությունը Փոքր Ասիայում արդյունավետ էր միայն մի կարճ ժամանակահատվածում: Հասցորդով մի քանի տարիների ընթացքում Ասորեստանի դիրքերն այստեղ հիմնավորապես սատանվեցին, որի տրամաբանական ավարտը Սարգոնի՝ մ.թ.ա. 705 թ. արշավանքն էր դեպի Թարալ,

պարտությունը և վախճանը ճակատամարտում:

Հաջորդ բաժնում կներկայացվեն արևելյան Փոքր Ասիայում  
մ.թ.ա. VIII դարի վերջին տասնամյակներում ընթացած էրնոթա-  
դարական բնույթի տեղաշարժերը, ինչպես նաև դրանցում  
աստիճանաբար վճռորոշ նշանակություն ստացած քաղաքական  
և միջին Աստուանյի ինտենցիան:

A II  
85072



## ԱՏՈՒՆԱՆ

### Մ.Թ.Ա. VIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Ատունան (աղբյուրներում նաև Տունա), որ տեղադրվում է Հալիսի մեծ ողբանի շրջանում<sup>80</sup>, առաջին անգամ հանդես է գալիս Թիգլթաթալասար III-ի տերստերում 743-732թթ. ընթացքում: Նրա արքա Աշխտուն (նաև՝ Ուշխտի) հիշատակվում է Ասորեստանին հարկատու բարադյան նրկրների բլում<sup>81</sup>:

Նախորդ քաժնում նշվեց, որ մ.թ.ա. 718թ. Սարգոնը Շինուխատի տարածքը հանձնել էր Ատունայի արքա Կուրտին (Խիրոզգլիթային աղբյուրներում Կուրտիս): Սա վկայում է այն մասին, որ սոլյալ պահին Ատունան յոթա է եղել Ասորեստանի նկատմամբ: Սակայն այս իրադարձությունից քիչ անց Ատունայի և Ասորեստանի փոխհարաբերությունները սրվում են: Սարգոնի մի տեղատուն հայտնվում է այն մասին, որ մ.թ.ա. 718թ. հետո Կուրտին հարել էր Մուշկիի արքա Միտային (Փռյուզիայի արքա Միդասը)<sup>82</sup>: Ըստ տեքստի, տեսնելով իր դաշնակից Ամրարիսի պալատությունը, Կուրտին բանազնացի միջոցով Ասորեստանի արքային հայտնում է իր յոթաբարան մասին:

Ատունայի և Ասորեստանի փոխհարաբերությունների քնույրը պարզելուն, անկասկած, կնուպատի մի կարևոր դիտարկում, որ երևան է գալիս Սարգոնի փոքրասիական քաղաքականությանը վերաբերող տեքստերի ուսումնասիրության ընթացքում:

Այսպես, մ.թ.ա. 718-713թթ. ընթացքում Փոքր Ասիայի լուվիական պետությունների նկատմամբ Սարգոնի ձեռնարկած պատմիչ միջոցառումները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի միջոցով:

Շինուխատ - ավերում (80),

գորբի տեղահանում (55),

ուսզմալար (99),

ուսզմալար և արքա Կիյակկիի ողջակիզում (118),

քնակչության տեղահանում (137):

Կասկո -	բնակչության տեղահանում (80, 99), ավերում (92):
Բիթ-Բուրուտաշ -	նվաճում (92), բնակչության տեղահանում (118), արքա Ամրարիսի և ազնվականության տեղահանում (55):
Խիլակկո	նվաճում (92), բնակչության տեղահանում (80, 99):
Թարալ (ընդհանուր)	նվաճում (92, 118), բնակչության տեղահանում (99):

\* Փակագծերում ասված թվերը նշում են համոզոտությունն անբառերի  
հերքական համարներից ըստ D.D.Lucktonի, ARAB-ի:

\*\* Աղյուսակում թույլ են թողնված Մեյնի մնացածը ձեռնարկված  
միջոցառումները (այդ մասին տե՛ս վերջ և ստորև):

\*\*\* Այս գույքակին պետի ավելացնել նաև Բիթ-Բարասաշում անձանց  
բնակչության բնակեցումը (տե՛ս վերջ):

Երե վերը բերված աղյուսակում Տոխանա-Տուվանայի և  
Կունի քաղաքայությունը կարելի է քաջատրեկ առաջինի  
լոյալությանը և երկրորդում Ասորեստանի փոխարքայի  
ներկայությանը, ապա քավական տարօրինակ է Ատունայի  
չիլչատակելը: Այս առնչությամբ հնարավոր է ենթադրել, որ կամ  
ասորեստանցիք իրենց փորքասխական արշավանքներում չեն  
հասել Ատունա՝ վերջինիս հեռու գտնվելու պատճառով, կամ էլ  
անհաջողության են մատնվել: Ինչ վերաբերում է Ամրարիսի  
պարտությունից հետո (713թ.) Կուրտիի կողմից Սարգոնին  
ղեկավարություն առաքելուն, ապա այդ քայլը, ամենայն հավանա-  
կանությամբ, քաջատրվում էր նրա նախնին դաշնակիցների՝ Բիթ-  
Բուրուտաշի և Մուշկի-Փոյուզիայի պարտությանը. տվյալ պահին  
քաջահայտ ստճակատումը Ասորեստանի հետ վտանգավոր էր,  
քանի որ ուժերի հարաբերակցությունը փոխվել էր հոգուտ  
վերջինիս: Դժվար է ասել, որքան է տևել Ատունայի առիպողական  
լոյալությունը: Համենայնդեպս, ոչ շատ երկար, քանի որ մի որոշ  
ժամանակ անց ասորեստանյան աղբյուրը հարորդում է Ատունայի  
բշնամական գործողությունների մասին:

Մ.թ.ա. 710/09 թ. Կոնի փոխարքային գրված, սակայն ինչ-ինչ պատճառներով չառաքված նամակում՝ հայտնվում է Ատրեատանին ներակա Բյուր-Բուրտուաշի որոշ բնակավայրերի գրավման մասին Ատտուանի և Եշտուտեղայի կողմից: Այստեղ նշվում է նաև այն մասին, որ Մուշկիի արքա Միտաչի հետ թալ հարաբերություններ են հաստատվել և Սարգոնը հույս է հայտնում, որ երկու երկրները (Ատրեատանը և Մուշկին) միասնական ուժերով կպատմեն Թարալին: «Նամակում» հաղորդվող տեղեկությունների հիման վրա պարզորոշ գծագրվում է հետևյալ իրավիճակը.

1) Տվյալ պահին Ատտուան և Եշտուտեղան գտնվել են Ատրեատանի տիրապետությունից դուրս:

2) Ատտուան և Մուշկին այլևս դաշնակիցներ չեն:

3) Ատրեատանի ուղղակի տիրապետության տակ գտնվող Բյուր-Բուրտուաշի բնակավայրերի գավառները կարելի է որակել որպես բազմաչափ բշխման կործանողություն, որ կարող էր նշանակել միայն Ատտուանի յոթալորյան ախարս:

4) Սարգոնը Մուշկիի օգնությամբ պատրաստվում էր պատմել Թարալի անհնազանդ երկրներին: Այստեղ, բնականաբար, «Թարալ» տերմինի տակ պիտի հասկանալ առաջին հերթին Ատտուան և Եշտուտեղան:

Այս դիտողությունները կարևոր են հարավային Փոքր Ասիայում մ.թ.ա. 710/09 թ. տեղեկված քաղաքական իրավիճակը գնահատելու համար:

Մ.թ.ա. 718-712 թթ. Փոքր Ասիայի մի շարք երկրների նկատմամբ Սարգոնի ձեռնարկված միջոցառումների ընթացքում դրանց մի մասը գրկվեց իշխող արքայատոհմերից և ազնվականությունից: Տեղական դինաստիաների ոչնչացումը և լայն տեղահանությունների քաղաքականությունը պիտի զգալիորեն խտրվեին նախկինում գոյություն ունեցող վարչա-քաղաքական կառույցը և սոցիալական բազան: Այսինքն, Սարգոնի նպատակը փոքրասիական պետությունների ուժեղացումը և սոցիալ-տնտեսական հիմքերի ոչնչացումն էր: Արդյունքում պիտի տեղեկվեր քաղաքական վակուում, որը Ատրեատանը չէր կարող լիովին լրացնել: Նման իրավիճակում հայտնված երկրները հարևան



**BOĞÇA**



Misarcik II



Misarcik I




Takinderbeut I



Şirzi



# ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՔԸ ԱՄԻԱՆ Մ.թ.Ա. VIII-VII ՂԱՆԵՐԻՆԻ



\* Այստեղ արքայազանները արքայազաններին փոխանակում էին իրենց առևտրային ապրանքները  
 + Այստեղ արքայազանները արքայազաններին փոխանակում էին իրենց առևտրային ապրանքները

պետությունների համար պիտի վերածվեն կոխանձորի: Այս այս տեսանկյունից, մեր կարծիքով, պիտի գնահատել Առումայի և Իշտունդայի կարճակունդ Բիթ-Բուրուտաշի վրա: Մանավանդ որ Առումայի քաղաքական նկրտումներն ապացուցող տվյալներ կան ևս: Կուրտիից մեզ հասած էիբրոզիֆային արձանագրություններում:

Կուրտիի մի արձանագրությունը, որ հայտնաբերվել է Հալխի մեծ ուղղանից քիչ հարավ՝ ժամանակակից Բոխչա բնակավայրի մոտ<sup>6</sup>, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այս արքայի գործունեության վերաբերյալ: Ստորև ներկայացնենք դրանից երկու հատված.

### BOĞÇA

- 1) EGO-mi Ku+ra/i-ti-i-sa Á-sa-CURRERE-si-sa<sub>4</sub> HEROS-li-i-sa  
 ("PUER")ni-mu-wa/i-za-sa ("OCCIDENS") i-pa-ma-ri+i-i  
 ORIENS+M/-ma-ri+i-ha PRAE AUDIRE-ti-i-sa REX-ti-sá
- 2) wa/i-ta (DEUS)TONITRUS-hu-ti za-ri+i (BONUS)wa/i-su-wa/i-i
- 3) wa/i-mu TERRA-REL+ra/i-zi SUPER+RA/I "CAPERE"(-)lá/vu-ra-á  
 pi-pa-sa-i  
 .....
- 6) á-mi-zi-pa-wa/i tá-ti-zi-i AVUS-ha-zi-ha REL-zi sa-ta
- 7) REL-pa-wa/i (DEUS)TONITRUS-hu-za-sa NEG<sub>2</sub> REL-ha-na  
 wa/i-ra/i-ia-ia
- 8) á-mu-wa/i REL+RA/I wa/-ra/i-ia
- 9) wa/i-mu "TERRA"+RA/I-zi SUPER+RA/I "CAPERE"(-) lá/vu-na  
 pi-pa-sa-ia

### ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) «Ես, Կուրտիսը, ներս(?) Ասխու(ի)սի որդին, արևմուտքում և արևելքում հայտնի արքան:
- 2) Այս Թալխունցասի հանդիպ ես բարեհաճ եմ:
- 3) Ես (Թալխունցաս աստվածը - ԱՔ) ինձ երկրների վրա իշխել տվեց:

- 4) Նրանք, ովքեր իմ հայրերը և պապերն էին,
- 5) Թարխունցապը նրանց չէի օգնում,
- 6) (քայց) նա օգնում էր ինձ:
- 7) Նա ինձ երկրների վրա խշխել տվեց»:

Երեք այլ, շինարարական բնույթի արձանագրություններ են հայտնաբերվել Արգեոս լեռան լանջերին\*:

Առաջին արձանագրության ներածական մասում Կուրտիսի՝ «արևմուտքում և արևելքում հայտնի արքա» տիտղոսը բույլ է տալիս ենթադրելու, որ տեղուտի կազմման պահին Ատունան ամենևին երկրորդական պետություն չի եղել: Իսկ թե որքանով էր այս տիտղոսն արտագրում Կուրտիսի պետության վիճակը, կարելի է դատել հաջորդ երկու արձանագրությունների հայտնաբերման վայրից:

Բանն այն է, որ ժամանակակից Կայսերիի շրջանը (նաև Արգեոս-Էրջիյաս լեռը) քիչ ավելի վաղ փուլում գտնվել է Բիթ-Բուրուտաշի տարածքում: Այստեղից տրամաբանորեն թխում է տվյալ շրջանը Կուրտիսի կողմից նվաճելու մասին ենթադրությունը, որը, թերև, ապացուցում է Կոնի կառավարչին ուղղված Սարգոն II-ի նամակում հիշատակված իրադարձության հավաստիությունը՝ Բիթ-Բուրուտաշի բնակավայրերի գրավումը Ատունայի և Իշաունդայի կողմից:

Ամփոփելով Սարգոն II-ի օրոք Ատունային նվիրված քաժինը, անհրաժեշտ է նշել հետևյալը:

Մ.թ.ա. 713-712թթ. ընթացքում փոքրասիական երկու պետությունների՝ Մելիտի և Բիթ-Բուրուտաշի ինքնուրույնության վերացումից մի որոշ ժամանակ անց, երբ դրանք վերածվել էին ասորեստանյան մարզերի, սկսվում է Ատունայի հզորացումը: Կուրտին ակնհայտորեն ձգտում էր ընդարձակել իր տիրույթները Ասորեստանին ենթակա շրջանների հաշվին: Համաժամանակյա աղբյուրների քաղաքաբանության պատճառով հնարավոր չէ պարզել Ատունայի նվաճումների ընդգրկված տարածքը: Սարգոնի նամակի և Կուրտիի երկու արձանագրությունների հիման վրա կարելի է մատնանշել միայն Կայսերիի շրջանը, սակայն այս իրադարձու-

բյուններից մեկ-երկու տասնամյակ անց, Միմաքերիքից հասած հազորդունը կարծես վկայում է այն մասին, որ Ատուհայի էրսպանսիան սկսոի տարածվեր Կասյերիից շատ ավելի արևելք (տևն ստորև): Համենայնդեպս, մի քան պարզ է միանշանակ, որ Սարգոնի կառավարման վերջին տարիներին արևելյան Փոքր Ասիայում ստոիծամաբար ձևավորվում էր քաղաքական մի նոր ուժ, որն ի վիճակի էր տարածաշրջանային լուրջ գործոնի դեր կատարել, մարտահրավեր նետելով Ասորեստանին:

## ԹԱՐԱԼԸ ԵՎ ՄԵԼՈՂԸ Մ.Թ.Ա. 705-695 ԹԹ.

Սարգոնի մամակը Կուեի կառավարչին այս արքայի կենդանության օրոք կազմված վերջին գրավոր աղբյուրն է Տավրոսից հյուսիս ընկած փոքրասիական երկրների հետ Ասորեստանի ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ: Սարգոնի կառավարման վերջին տարիներով բվագրվող տեքստերում որևէ ակնարկ չկա բաբալյան երկրների նկատմամբ Ասորեստանի և Մուշկիի համատեղ ձեռնարկման մասին (տե՛ս վերը, Կուեի կառավարչին ուղղված նամակը): Մ.թ.ա. 710/09 թ. հետո ասորեստանյան պաշտոնական արձանագրությունները հստակ տեղեկություններ են հաղորդում Սարգոնի մի շարք արտաքին քաղաքական միջոցառումների մասին, որոնց աշխարհագրական շրջանակները արդեն նկատելիորեն սեղմված են:

Այսպես, մ.թ.ա. 708թ. Սարգոնը նվաճեց Տավրոսից հարավ ընկած լուսիական վերջին պետությունը՝ Կումմուխը, որը դեռևս չէր վերածվել ասորեստանյան մարզի<sup>1)</sup>: Այս ձեռնարկման պատճառը, ըստ Սարգոնի, Կումմուխի արքա Մուտալլուի հակաասորեստանյան դավերն էին Ուրարտուի արքա Արգիշտի II-ի հետ: Ինչ վերաբերում է բաբալյան երկրներին և Մեկիդին, ապա սրանց վերաբերյալ այլևս որևէ հիշատակություն չկա: Այս հանգամանքը ստիպել է մասնագետներին մ.թ.ա. 710/09-705թթ. դիտել որպես Ասորեստանի հյուսիս-արևմուտքում վարած արտաքին քաղաքականության հաջող ավարտի փուլ, երբ Սարգոնը կարող էր իրեն ապահով զգալ այս տարածաշրջանում<sup>2)</sup>: Սակայն այս տեսակետը, որոշ նկատառումների թելադրանքով, դժվար է ընդունել:

1) Ենթադրվում է, որ Արգիշտի II-ի օրոք Ուրարտուն չէր կարող արտաքին քաղաքական ակտիվություն ցուցաբերել, քանի որ զբաղված էր կլիմներասկան խնդրով<sup>3)</sup>: Սակայն այդ դեպքում ինչպես բացատրել բոլոր կողմերից ասորեստանյան տիրույթներով շրջապատված Կումմուխի արքա Մուտալլուի ուրարտանետ դիրքորոշումը մ.թ.ա. 708թ. անմիջապես նախադրող փուլում: Մանախանդ, որ մ.թ.ա. 712թ. հենց Սարգոնն էր նվաճված Մեկիդի տարածքի մի մասը

մայրաքաղաքով հանդերձ համձնել Կոստմոխին:

2) Ինչու Սարգոնի տեքստերում որևէ հիշատակություն չկա մ.թ.ա. 710/09 թ. հետո բարալյան երկրների հնագանդեցման մասին:

3) Եթե հյուսիս-արևմուտքում՝ Տալրոսից հյուսիս Ասորեստանի դիրքերն իրոք այդքան կայուն էին, ապա ինչը կարող էր ստիպել Սարգոնին անձամբ զվտավորելու մ.թ.ա. 705 թ. դեպի Թարսլ կազմակերպված արշավանքը:

Մեր կարծիքով, մ.թ.ա. 705 թ. Սարգոնի ճակատագրական փոքրասիական արշավանքը անխզելիորեն կապված է այտուղ նախորդող ժամանակաշրջանում տեղ գտած քաղաքական իրադարձությունների հետ: Մասնագետները Սարգոնի բարալյան արշավանքի անհրաժեշտությունը սովորաբար բացատրում են այս տարածաշրջանում անսպասելի հայտնված կիմմերների սպառնալիքով, որոնք իբրև թե մ.թ.ա. 715/14թ. Ուրարտուի նկատմամբ տալիս է հաղթանակից հետո կարող էին ընթանալ դեպի արևելյան Փոքր Ասիա\*:

Սարգոնի փոքրասիական արշավանքի մասին տեղեկությունը պատկանել են երկու աղբյուրներ՝ 1) այսպես կոչված «Էպոնիմների ժամանակագրությունը» և 2) Բաբելոնյան ժամանակագրությունները\*:

1) «Արքան ընդդեմ Թարսլի ...» ընդդեմ Կոլլոմմանցի Գուրդի:

[...] Արքան սպանվեց: Ասորեստանի արքայի ճամբարը [վերցվեց ...]:»

2) «Սարգոնը զմաց պատերազմի ընդդեմ Թարսլի. [սպանվեց պատերազմում]»:

Հարկ է նշել, որ նախկինում Սարգոնի հակառակորդի անունը ընթերցվում էր Էշբաի (\* Eš-ša-i)\*: Այժմ, սակայն, դրա վերընթերցումը որպես Գուրդի (\* Gúr-di-i)\* բույլ է տալիս վերամայելու այս տարածաշրջանում մ.թ.ա. 705թ. և նախորդող շրջանում ընթացած քաղաքական իրադարձությունների նախնին մեկնաբանությունը:

Անկասկած, որևէ հիմք չկա մ.թ.ա. 705թ. Սարգոնի հակառակորդին՝ «կոլոմմացի Գուրդին» ենթադրյալ կիմմերների հետ

առնչելու.

1) Մնապազրական Գուրղի (նաև Կուրտի) և հիերոզվիլային Կուրտիա անունները նույնական են: Սրանցից երկուրդը հանդիպում է նաև ժամանակակից Զյուրիխից ոչ հեռու (Կայսերիի շրջան) հայտնաբերված և հիերոզվիլային լուսիներեն լեզվով գրված տեղեկական բնույթի արձանագրություններում<sup>2</sup>, որի կրողները որևէ առնչություն չունեն Ատունայի արքայի հետ: Պիտի ենթադրել, որ այս մարդիկ (սրանք ինչ-որ պաշտոնատար անձինք են) բնակվել են Քաբալում առնվազն մ.թ.ա. VIII դարի կեսերից, քանի որ Ատունայի արքա Կուրտիսի հայրը հիշատակված է Քիզլասալապապու III-ի կողմից մ.թ.ա. 743-732թթ. ընթացքում (տե՛ս վերը): Այնպես որ, Կուրտի(ս)-Գուրղի անունը սարսաղիք չէ կապել մ.թ.ա. 715-714 թթ. շրջանում ենթադրաբար Ուրարտուից արևմուտք տեղաշարժվող կիժներների հետ:

Հարկ է նշել նաև, որ, բացի Սարգոնի շրջանով քվազվող վերոհիշյալ սեպագիր և հիերոզվիլային արձանագրություններից, այս անունը վկայված չէ մ.թ.ա. II-I հազարամյակների խեթալուվիական աղբյուրներում: Սա, իհարկե, լուրջ փաստարկ չէ, սակայն, այնուամենայնիվ, կարող է վկայել հոգուտ այն ենթադրության, որ բննարկվող անձնանունը չի պատկանել խեթալուվիական լեզվական արեալին (այս մասին տե՛ս տարև):

2) Մ.թ.ա. 718-710/09թթ. Ասորեստանի և Ատունայի փոխհայաբերությունների զարգացման դինամիկան բնադրում է, որ վերջինս դիտվել է որպես Ասորեստանի պոտենցիալ հակառակորդ այս տարածաշրջանում: Եթե նույնիսկ ելնենք ձևական տրանսբանդությունից, ապա տարօրինակ կլիներ սպասել, որպեսզի Ասորեստանի արքան աջակցեր իր գերիշխանությունը չընդունող պետությանը ընդդեմ վերջինիս երկիրը ներխուժած հակառակորդի (եթե «կուլումնագի») Գուրղին Քաբալ ներխուժած կիժներական առաջնորդ դիտվի):

Ուսումնասիրվող խնդրի պարզաբանման համար կարևոր աղբյուր է Սարգոնի որդու՝ Սինաքերիբի (մ.թ.ա. 704-681թթ.) մի տեքստը<sup>3</sup>: Ըստ դրա, Սարգոնի և Գուրղի միջև տեղի ունեցած ճակատամարտից տաս տարի անց՝ մ.թ.ա. 695թ. Սինաքերիբը

արչավանք է ձեռնարկում դեպի Թիլգարին՝ մու քաղաքը, որի ամուլությունը հիշատակվում է արչավանքին նախորդած մի իրադարձություն՝ մի ոմն Գուրդի Թիլգարին՝ մուտն պետություն էր հիմնել:

Այս տեղեկությունը արտակարգ կարևոր է այն առումով, որ եզրակացվում է միևնույն տարածաշրջանում (արևելյան Փոքր Ասիա) մ.թ.ա. VIII դարի վերջին տասնամյակներում ընթացած քաղաքական մի պրոցես, որում մշտապես առաջին պլանում հանդես է գալիս միևնույն անունը կրող մի անձնավորություն՝ Կուրտի(ս)-Գուրդի.

- |                          |   |                        |
|--------------------------|---|------------------------|
| 1) Կուրտի                | - | 718-713թթ. (Ատունա)    |
| 2) «Կուլունմանցի» Գուրդի | - | 705թ. (Թաքալ)          |
| 3) Թիլգարին՝ մուի Գուրդի | - | 695թ. (Թիլգարին՝ մու): |

Այսպիսով, բժում է, վերջ ներկայացված փաստերի ճշման տակ դժվար է միայնակից տարանջատել վերոհիշյալ անձնավորություններին, չնայած, տեսականորեն, դա անհնար չէ: Այս հարցում ժամանակագրական որևէ բարդություն չկա: Սբե ենթադրենք, որ Ատունայի արքա Կուրտիսը կառավարել է սկսած մ.թ.ա. VIII դարի 20-ական թվականներից, ապա նա կարող էր ապրել նաև Սինաբերիլի օրոք (մոտավորապես 25 տարի կան թիլ ալիլի): Անհանձնատ ալիլի դժվար է վերոհիշյալ անձնավորություններից երկրորդի անվանը կցված «կուլունմանցի» տեղանվան բացատրությունը, այն չի հանդիպում որևէ այլ աղբյուրում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Թաքալի և Մելիդի տարածքում նշանակալից քաղաքական նոր ուժի ձևավորման մասին մեր ենթադրությունն ապացուցվում է Սինաբերիլին հաջորդած Ասորեստանի երկու արքաների՝ Ասարիստրոնի (680-669թթ.) և Աշշուրբանասարի (668-635/27թթ.) տեքստերի սվալաներով: Այստեղ հիշատակվում են Մելիդի և Թաքալի արքաներ Մուգալլուն, Իշլալլուն և [...] ուսին:

Մ.թ.ա. 675/4թ. Ասարիստրոնը անհաջող սլառելիսզմ է վարում Մուգալլուի դեմ<sup>66</sup>, իսկ Աշշուրբանասարի օրոք հիշատակվում է Մելիդի և Թաքալի արքա Մուգալլուն<sup>67</sup>. վերջինս կարող էր լինել Ասարիստրոնի տեքստերից հայտնի Մելիդի արքան:



Ըստ Ի.Ղյալկոնովի, այս Մուգալուն, հավանաբար, թիզարիմնուից է եղել<sup>1</sup>: Ընդ որում վերոհիշյալ աղբյուրները որևէ հիմք չեն տալիս ենթադրելու, որ Թարալը և Մելիդը գտնվել են Ասորեստանի գերիշխանության տակ:

Ասվածը վկայում է այն մասին, որ Սինաբերիբի ժամանակներից սկսած, Մելիդի և Թարալի տարածքում ծնավորված նոր պետությունը (սրայնանականորեն՝ թիզարիմնու) բավական կենսունակ քաղաքական միավոր է եղել: Ղյալ հետագա պատմության վերաբերյալ սեպագիր աղբյուրներում այլևս տեղեկություններ չկան:

## ԹԱՐԱՎ-ՄԵԼԻԴԻ ՆՈՐ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Նախորդ բաժիններում ներկայացված սկզբնաղբյուրների քննարկումից բխող հզրակացությունները ստիպում են անդրադառնալ մ.թ.ա. VIII դարի վերջին տասնամյակներում և VII դարի սկզբներին արևելյան Փոքր Ասիայում քաղաքական իշխանության հասած ուժերի էթնիկական բովանդակության խնդրին:

Այսօր մասնագիտական գրախնության մեջ առկա են երկու տեսակետներ, որոնցից յուրաքանչյուրը վտրձում է քացառելի Մելիդ-Թարալի քաղաքական վերելքի պատճառները Սարգոն-Սինարեթիթի ժամանակաշրջանից հետո:

1) *Փոյուզական վարկածը*. Ըստ այս տեսակետի<sup>2</sup>, արևելյան Փոքր Ասիան, մասնավորապես Թարալը, պիտի ենթարկվեր Փոքր Ասիայի արևմուտքում Սանգարիտսի հովտում ձևավորված և մ.թ.ա. VIII դարի վերջին քառորդում մեծ ակտիվություն ցուցաբերող Փոյուզիայի քաղաքական և մշակութային ներթափանցմանը: Դրա հետևանքով այստեղ կարող էր արմատավորվել Ատունայի փոյուզական արքայատոհմը: Այս կարծիքի համար հիմք են ծառայում 1) Փոյուզիայի արքա Գորդիասի (Միդասի հայրը) անվան մնամությունը Գորդիի հետ, 2) այսօր արդեն հնացած այն ենթադրությունը, ըստ որի արևելյան և կենտրոնական Փոքր Ասիայում ետիսերական դարաշրջանում առկա է «Հին փոյուզական» մշակույթը<sup>3</sup>:

Որ Գորդիաս և Կուրտի(ս)Գորդի անունները ոչ միայն նման են, այլ, հավանաբար, նույնական, դժվար է վիճարկել<sup>4</sup>: Ինչ վերաբերում է «Հին փոյուզական» պայմանական անվանումը կրող մշակույթին, որն ընդգրկում է արևելյան և կենտրոնական Փոքր Ասիան (մ.թ.ա. XII-VIII դդ.), ապա այն այսօր արդեն կարելի է վստահորեն տարանջատել ինչպես Սանգարիտսի հովտի բուն փոյուզական մշակույթից (առկա է մ.թ.ա. X-IX դդ. սկսած), այնպես

էլ Գորդիոնում վկայված վաղ երկաթեդարյան մշակույթից (մ.թ.ա. XII-X դդ.): Նախկինում «Հին փոշոգական» հորջորջված այս մշակույթը այժմ հայտնի է որպես «Ալիշար IV» և տարածքային առումով ընդգրկում է ետխերական դարաշրջանի լուսնական սփ-տոթյունների արեալը (Մելիկ և Թարալ): Այս երկու մշակութային համալիրների սահմանը անցնում է մոտավորապես Մանգարիտի հովտից դեպի հարավ-արևելք՝ Կոնյայի հարթավայր՝ մինչև Կիլիկյան Տալիոս գիծը: Դրանից արևմուտք ընկած տարածքը բնութագրվում է գորշ կամ կարմիր միագույն (մոնոխրոմ) խեցեղենով (վոլյուգական), իսկ արևելյան հատվածը՝ բազմագույն (պոլիխրոմ) խեցեղենով («Ալիշար IV»)<sup>2</sup>: Վերջինիս ակունքները ակնհայտորեն սլիտի փնտրել տեղում, այլ ոչ որևէ այլ տարածաշրջանում, սովալ պարագայում Հյուսիսային Բալկաններում կամ դրա հարևանությամբ: Իհարկե, առկամը չի նշանակում, թե «Ալիշար IV»-ը սլիտի էրնիկապես միատարր լինել, այսինքն, եթե դրա կրողները նախօպես խեթա լուսնացիներն էին, ապա ժամանակի ընթացքում այն չէր կարող չընդունել այլ էրնոմշակութային տարրեր և:

2. *Արևելափոքրասիական վարկածը* Դեռ 1960-ական բլականներից մասնագիտական գրականության մեջ առաջ է քաշվել մի ենթադրություն<sup>3</sup>, ըստ որի սրատմական Մեծ Փոյուզիան հանդիսացել է երկու էրնոմշակութային աշխարհների կոնտակտային գոտի: Դրանցից առաջինը վկայված է Խեթական տեղության տրոհումից հետո՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին, ի դեմս ենթադրաբար Հյուսիսային Բալկաններից և հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայից Մանգարիտսի հովիտ տեղաշարժված ցեղերի: Երկրորդն այստեղ հայտնվում է շատ ափելի ուշ, մոտավորապես մ.թ.ա. IX-VIII դդ.: Վերջինիս ներկայությամբ է բացատրվում Գորդիոնի զարգացած մետաղամշակությունը, խեցեղենային որոշ տիպեր և այլն: Ենթադրվում է նաև, որ ասորեստանյան աղբյուրներում Փոյուզիան «Մուշկի» է կոչվել այս երկրորդ մշակույթի կրողների անունով, որոնց ասորեստանցիք լավ ծանոթ էին վերինեփրատյան տարածքից: Մուշկի-Փոյուզիայի արքա Միտան (= անտիկ աղբյուրների Միդաս) կարող էր լինել Փոյուզիայի

բնակչության մուշկական հատվածի ներկայացուցիչը”:

Հնագիտական աղբյուրներից զատ, վերոհիշյալ տեսակետը հիմնավորվում է նաև գրավոր աղբյուրների տվյալներով.

1) Մ.թ.ա. XV դ. երկրորդ կեսով բվագրվող խեթական «Պախխու-վացի Միտայի» տեքստում<sup>66</sup> որպես վերինեփրատյան Պախխուվա երկրի կառավարիչ հանդես եկող Միտայի և Փոյուզիայի արքա Միտայի անունների նույնությունը:

2) Նկատվել է նաև, որ *mita(i)s* բառը որպես հասարակ անուն բազմիցս հիշատակվում է հիերոգլիֆային լուսիական արձանագրություններում՝ «ձառա, ստրուկ» իմաստով<sup>67</sup>: Նշանակում է, խեթական տեղության տրոհումից հետո կենտրոնական և արևելյան Փոքր Ասիայի տարբեր շրջաններում պիտի բնակվեր մի բավական մեծաքանակ էթնիկական խումբ, որի լեզվից լուսիացիք կարող էին փոխ առնել այս բառը:

Այս երկու փաստարկները լուրջ վկայություն պիտի դիտել Միտա անձնանվան և համապատասխան էրնոսի արևելափոքրասիական ժազման օգտին:

Այսպիսով, վերը ներկայացված երկու վարկածների օգտին են վկայում սահմանափակ թվով փաստարկներ: Առաջինի հիմքը Ատունայի արքա Կուրտիսի և Փոյուզիայի արքա Գորդիասի անունների նույնությունն է, ինչպես նաև «Հին փոյուզական» կոչվող հնագիտական մշակույթի արևելափոքրասիական արեալը, իսկ երկրորդինը՝ Միտա անձնանվան (համապատասխանաբար, *mita(i)s* հասարակ բառի գոյությունը հիերոգլիֆային լուսիերենում) առկայությունը վերինեփրատյան գոտում դեռ մ.թ.ա. XV դ. և «Ալիշար IV» մշակույթի արևելափոքրասիական օրրանը: Ինչպես նշվեց վերը, «Հին փոյուզական» մշակույթը նույնն է ինչ «Ալիշար IV»-ը, և այս հանգամանքը նվազեցնում է փոյուզական վարկածի հիմքը: Սուրբ ներկայացնենք Փոյուզիայի արքայական դինաստիայի վերաբերյալ առկա տեղեկությունները, դրո՞ւք, մեր կարծիքով, լրացուցիչ հիմնավորում կհաղորդեն արևելափոքրասիական վարկածին: (Մեկիդ-Ֆրաբլի տարածքի էթնիկական բովանդակության խնդրի շուրջ տե՛ս նաև աշխատության վերջին գլխում):

## ՓՈՅՈՒԳԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՔԱՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Անտիկ հեղինակների հաղորդած տեղեկությունները Փոյուզիայի և նրա արքաների մասին չափազանց աղուտ են և հիմնականում, եթե ոչ ամբողջապես՝ ատասպեթախառն<sup>67</sup>: Ամենավաղ հիշատակությունը պատկանել է Հերոդոտոսը: Ըստ նրա (I, 14), Փոյուզիայի արքա Միսթարը արքայական գահ է նվիրաբերել Դեկիյան տանալին: Նույն տեղում հիշատակվում է Միսթասի հայր Գորդիասը: Հերոդոտոսը հայտնում է Տրոյական պատերազմի շրջանում Մակեդոնիայից վաշտագայիների տեղաշարժի մասին (I, 14), սակայն ինչպես նա, այնպես էլ մյուս հեղինակները ոչինչ չգիտեն այդ իրադարձությունից հետո՝ ընդհուպ մինչև Գորդիաս-Միսթասի ժամանակաշրջանն ընկած վուլի մասին, այսինքն, մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսը: Եվ դա այն դեպքում, երբ Փոյուզիան և իոնիական իուլները եղել են հարևաններ, անմիջականորեն չվիճվով միմյանց հետ<sup>68</sup>: Ուշագրավ է, որ Փոյուզիայի քաղաքական պատմությունը շրջանցած իոնիացի Հերոդոտոսը հանգամանույնն ներկայացնում է արևմտափոքրասիական մեկ այլ պետության՝ Լիդիայի պատմությունը, այդ թվում նաև նրա երկու արքայատոհմերին (Հեթակյաններ և Միրմադյաններ), որոնցից առաջինի ակունքները հասցվում են մինչև մ.թ.ա. II հազարամյակ: Փոյուզիայի արքաներից իուլները գիտեն միայն Միսթասին և մայրաքաղաք Գորդիանի երանադիր Գորդիասին, որոնք սերել են ատասպեթական նախնի Ասկանիոսից: Ընդ որում, անտիկ աղբյուրները հակասական տեղեկություններ են հաղորդում վերջինիա մասին: Ասկանիոսի անունը հանդես է գալիս որպես լին (Նիկեայի, Կիպիլոսի կամ Կեղեմեի մոտ), երկիր, գետ, քնակաձայր և նույնիսկ կղզիներ Լյվիան ծովում<sup>69</sup>: Որպես անձնանուն այն հիշատակվում է ընդամենը երկու անգամ՝ «Վլիակաճում» (II, 862; XIII, 792), ընդ որում սրաբ չէ դրա կրողների նույնությունը:

Դեռ Մուրաբունն է ժամանակին կասկած հայտնել Ասկանիոսի անձի պատմականության խնդրում: Ըստ նրա, Հռոմոսը

հաճախ անձնանունները բխեցնում էր գետերի, լճերի և բնակավայրերի անուններից (XII, 4,5): Ստրաբոնի կարծիքը Հռոմեոսի վերաբերյալ արդարացվում է հենց փոյուզական նյութի խնդրում: Այսպես, «Լիվիականում» հաղորդվում է այն մասին, որ երկտասարդ հասակում Տրոյայի ապագա արքա Պրիամոսը, որպես դաշնակից փոյուզական առաջնորդներ Օտրևսի և Միդդոնեսի, մարտնչել է ընդդեմ ամազոնուհիների (III, 184-190): Հիշատակված փոյուզական առաջնորդների անունները վկայված են մի շարք անտիկ աղբյուրներում որպես բնակավայրերի անուններ՝ Միդդոնիա (Մյսիայում, Բյուքահայում, Մեծ Փոյուզիայում), Օտրոյա (Ասկանիոս լճի մոտ՝ Նիկեայի շրջակայքում)<sup>76</sup>: Սրանցից առաջինը ակնհայտորեն ցեղանուն է, որը գալիս է մակեդոնացիների առասպելական անվանադիր Միդդոնեսի անունից, երկրորդը հիշեցնում է հյուսիս-արևմտյան Փոքր Ասիայում դեռ խեթական աղբյուրներից հայտնի <sup>URU</sup>Atriya քաղաքի անունը: «Արջինս նույնպես կարող էր ծագել ցեղանունից (եմբադրաբար, այս տարածքներում ապրած տիրեներների անունից)<sup>77</sup>:

Անտիկ հեղինակներից երկուսի երկերում պահպանված տեղեկությունները աներկբայորեն վկայում են այն մասին, որ հենց Միդասն է եղել փոյուզական արքայական դինաստիայի հիմնադիրը:

Այսպես, Արրիանոսի «Անաբասիսում»<sup>78</sup> հաղորդվում է Միդասի հորը՝ Գորդիասին պատահած աստվածային նախանշանի պատմությունը: Ըստ դրա, Միդասին էին աստվածները կանխագուշակել Փոյուզիայում խաղաղություն և կարգուկանոն հաստատելու առաքելությունը, որտեղ մինչ այդ անիշխանություն էր տիրում: Արրիանոսը պարզորոշ հայտնում է այն մասին, որ Գորդիասը ընդամենը հասարակ երկրագործ է եղել:

Աստվածային միջամտությանը իշխանության հասած և սեվոսկան արքայատոհմերի հիմնած արքաների մասին առասպելական մոտիվները քազմարիվ են ինչպես հին աշխարհի, այնպես էլ ավելի ուշ շրջանի պատմության մեջ: Օրփնակ, Սարգոն Աքքադցու, Հին խեթական քազալորության հիմնադիր Լարսարնայի, Լիդիայում Գիգեսի, Չեսի և Գանայայի որդի Պերսևսի, Հոմո քաղաքի

իմնադիր և առաջին արքա Հոռմուխի և այլոց շուրջը հյուսված առասպելական պատմությունները: Միդասը նույնպես կարող էր լինել Գորդիոնում իշխանության հասած մի արքա, բացառված չէ նաև տեղական արձատներ չունեցող:

Այսպիսով, անտիկ աղանդության տվյալները Գորդիաս-Միդասի դինատոլիայի վերաբերյալ կարելի է ամբողջացնել հետևյալ եզրակացությունների միջոցով.

ա) Պատմական Մեծ Փոյուզիայի միջուկի՝ Սանգարիտի հովտի հետ առնչվող Ասկանիոսը Տրոյական Պատերազմի ժամանակաշրջանի իրողություն է և շուրջ չորս դարով բաժանվում է Գորդիաս-Միդասից: Անդ որում, որևէ աղբյուր չի ակնարկում վերջիններին հետ Ասկանիոսի ունեցած դինատոլիական կապի առկայության մասին:

բ) Ամենայն հավանականությամբ, Միդասի հայր Գորդիասը Փոյուզիայի արքա չի եղել: Այս դինատոլիայի՝ Գորդիոնում իշխած առաջին արքան պիտի Միդասը լիներ, որի իշխանության գալը որոշակիորեն կարելի է մեկնաբանել որպես զսիի բռնազավթում<sup>7</sup>:

Վերոիշյալ եզրակացություններին պիտի ալելացնել նաև այն, որ հույները, հատկապես հունիացի հեղինակները, թազմաբխի էիլլատակություններ ունեն Փոյուզիայի տարածքի, բնակչության գրադմունքների, փոյուզական աստվածների վերաբերյալ, սակայն այստեղ իշխած արքաների մասին տեղեկությունները տարօրինակ կերպով ստղ են և ոչ հավաստի: Մտորն վտրձենք մեկնաբանել այս իրավիճակը:

## ՓՈՅՈՒԳԻԱԷ ԵՎ ԱՏՈՒՆԱ

Վերը ներկայացված նյութերը պարզորոշ վկայում են այն մասին, որ Թաբալի հյուսիսում Հալխի մեծ ոլորանի շրջանում մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսին հիշատակվող Ատունա պետության երկու արքաների անունները՝ Ա/Ուշխաի (հիերոգլիֆային Ասխա(ի)ս) և Կուրտի (հիերոգլիֆային Կուրտիս) հիշեցնում են Ասկանիոս և Գորդիաս անունները: Ընդ որում, Ա/Ուշխաին հիշատակված է մ.թ.ա.743-732թթ., իսկ Կուրտին՝ 718-713թթ.: Վերջինիս անունը հանդես է գալիս մ.թ.ա. 705 և 695թթ. ողպես Թաբալ-Մելիդի տարածքում հակաասորեստանյան ուժերի ղեկավար:

Արդյոք տա պատահական մեամություն է: Այս խնդիրը քննարկելիս անհնար է շրջանցել Ատունայի վերոհիշյալ արքաների անունների մեկնաբանությունը, որ առաջարկել է Ի.Գյակոնովը՝ «Վերջինիս կարծիքով, Ատունայի արքա Կուրտիսը ոչ այլ ոք է, քան հենց ինքը՝ անտիկ աղբյուրների Գորդիասը(Դ) Միտա-Միդասի խաղը: Ինչպես է հիմնավորում հեղինակը իր կարծիքը:

1) Կուրտիսի տիտղոսը («արևմուտքում և արևելքում հայտնի արքա») քնուրազական չէ Թաբալի արքաներին և ակնարկում է դրա կրողի ունեցած մեծ հեղինակության մասին:

2) Սարգոն II-ի կողմից Թաբալի տարածքի նվաճումից և հասկապես կիսմերական արչավանքի ընթացքում Միդաս Ի-ի գոհվելուց հետո հետագայի փոյուզական ոչ մի արքա չէր կարող իշխել Կուրտիսի արձանագրության հայտնաբերման վայրում (BOGÇA):

3) Եթե նույնիսկ այս Կուրտիս-Գորդիասը իշխել է Միդասից հետո ընկած ինչ-որ ժամանակահատվածում, ապա նա անսրայման իր նախնիների շարքում կհիշատակեր Միդասին, բացի այդ արձանագրությունը կկազմեր փոյուզերին:

Վերոհիշյալ փաստարկներից առաջինը չի հակասում արձանագրության հեղինակի տեղական՝ քաբալյան արքա լինելու



մասին տեսակետին, հատկապես սույն աշխատության համապատասխան բաժնում («Ատոմնան մ.թ.ա. VIII դարի վերջին քառորդում») բերված նյութերի լույսի տակ: Կուլտիսի հաջողությունները Ասորեստանին ենթակա թարալյան տարածաշրջանում միանգամայն բավական էին իրեն «արևմուտքում և արևելքում հայտնի արքա» հորջորջելու համար: Բացի այդ, նման «արտառոց» տխրոսներ են կրում նաև ետխերական դարաշրջանի մի շարք լուվիական արքաներ և այլ կառավարիչներ՝ թարալյան Բիթ-Ռուրուտաշի արքաներ Տուվատիսը և Վասուտարմասը (վերջինս Կուլտիսի հոր ժամանակակիցն էր)<sup>1</sup>, Կարգամիսի մ.թ.ա. IX դարի վերջի - VIII դարի սկզբի կառավարիչ (գահաժառանգի խնամակալ) Յարիբիսը<sup>2</sup>, Կաշտային Կիլիկիայի Կոե պետության կառավարիչ Ացատիվատասը<sup>3</sup>: Նկատվել է, որ այսպիսի տխրոսները արտացոլել են վերոհիշյալ արքաների և կառավարիչների ունեցած հաջողությունները ներքին և արտաքին քաղաքականության առաջնությունը<sup>4</sup>:

Հաջորդ երկու վաստարիկները քննարկման կարիք չունեն, քանի որ ըստ էության վաստարիկներ չեն: BOGÇA-ի հեղինակը խակապես մ.թ.ա. VIII դարի վերջին քառորդում իշխած Կուլտիսն է և, քննականաբար, այսուեղ անխնայ կլիներ սպասել ոչ միայն Միտա-Միսասի անվան հիշատակության, այլև՝ փոյուզերեն լեզվի:

Սակայն, այնուամենայնիվ, Ատոմայի և Փոյուզիայի արքաների անունների մնամության վաստոր չի կարելի դասել պատահական համընկնումների շարքը: Այս խնդրի մեկնաբանությունը արտակարգ կարևոր է օբյեկտիվորեն գնահատելու համար ինչպես Փոյուզիայի արքայատոհմի ծագման խնդիրը, այնպես էլ «Տուն Թորգոմայի» իննումնը: Ստորև ներկայացնենք մեր մտեկումը այս խնդիրների առնչությամբ:

Ելակետային դրույթներ.

1) Ըստ Եվսեբիոս Կեսարացու, Փոյուզիայի արքա Միդասը իշխել է մ.թ.ա. 738-696թթ. (հայերեն բարոգմանության մեջ 738-ի փոխարեն նշվում է 741թ.): Հուլիոս Ալքիվազին<sup>5</sup> Միդասի մահը թվագրում է մ.թ.ա. 676թ.: Իսկ Սարգոն II-ի տեքստեղում Մուշկիի արքա Միտան հիշատակվում է մ.թ.ա. 717-707թթ.:

Նշանակում է, ժամանակագրորեն երկու անձնավորությունները համընկնում են: Այսինքն, երկու տարբեր սկզբնաղբյուրներ (անտիկ և սեպագրական) նշում են Միտա-Միդասի կառավարման միևնույն ժամանակը:

2) Փոյուզիան և Ատունան միանշանակ տարբեր քաղաքական միավորներ են եղել:

3) Փոյուզիայի արքա Միտան և Ատունայի արքա Կուրտիսը ժամանակակիցներ են, Միտա-Միդասի հայրը Գոլպիասն է, իսկ Կուրտիսի հայրը՝ Ասխու(ի)սը: Այսինքն, Միտան և Կուրտիսը միևնույն սերնդի ներկայացուցիչներ են եղել:

Նկատի ունենալով վերոհիշյալ ակնառու փաստերը, հնարավոր ենք համարում առաջարկելու մեր տրամադրության տակ եղած սկզբնաղբյուրներից թիտղ հետևյալ տրամաբանական տարբերակը:

Առավել հավանական է թվում այն ենթադրությունը, որ տվյալ պարագայում գործ ունենք երկու տարբեր քաղաքական միավորներում ներկայացված և միմյանց հետ ինչ-որ եղանակով (հավանաբար, դինաստիական) կապերով կապված Փոյուզիայի և Ատունայի արքաներին մեկ արքայատոհմում միավորելու միտումի հետ: Անտիկ ափանդության մեջ Միդասը կարող էր միավորվել արևելյան Ասխու(ի)սի և Կուրտիսի հետ, ընդ որում վերջիններս պլատի դիտվելիս որպես ափազ սերունդ, չնայած Կուրտիսը և Միդասը ժամանակակիցներ են եղել:

Ինչպես կարող էր տեղ գտնել նման երևույթ: Որոնք են Միդասի և Գոլպիասի վերաբերյալ արևմտյան՝ անտիկ հեղինակների պատկերացումների աղբյուրները<sup>26</sup>:

Անտիկ աղբյուրների տեղեկությունները Գոլպիաս-Միդասի վերաբերյալ բաժանվում են երկու խմբի՝ 1) Պոմպեոս Տրոգոս (երկից հատվածներ են հասել Հուստինոսի աշխատության միջոցով) և Արրիանոսի «Ալեքսանդրի Անաբասիսը», 2) մինչհելլենիստական հեղինակներ (Հերոդոտոս, Տիրտոս, Արիստոֆանես, Պլատոն, Քսենոֆոն): Երկրորդ խմբի հեղինակների տեղեկությունները գրեթե բացառապես քնուրազում են Միդասի անձը (էջի ականջներ, գիրքնական հարստություն և այլն): Ընդ որում, սրանցից ոչ մեկը

Միդասին չի առնչում Փռյուզիայի մայրաքաղաք Գորդիոնի հետ:

Առաջին խմբի հեղինակների աղբյուրը պիտի լիներ ինչ-որ տեղական ավանդույթ, որին հույները կալող էին ծանոթանալ Ալեքսանդրի պարսկական արշավանքի ընթացքում Գորդիոնում եղած ժամանակ («Գորդյան հանգույցի» դիպվածը): Իսկ տա նշանակում է, որ արևմտյան Փոքր Ասիայում գոյություն ունեցող մեծաքանակ հունական քաղաքներում մինչև մ.թ.ա. 330-ական թվականների վերջերը որևէ հավաստի տեղեկություն չեն ունեցել մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսի Փոքր Ասիայի խաշոյ պետություններից մեկի արքաների մասին: Հնարավոր է, դա բացատրվում է այս դիմաստիայի կարծառև կառավարումով:

Որ Գորդիաս-Միդասի դիմաստիան, ամենայն հավանականությամբ, տեղական արձատներ չի ունեցել, կարելի է ենթադրել նաև այլ բնույթի վաստերի հիման վրա:

Այսպես, ըստ հնագիտական աղբյուրների, Գորդիոնը միայն մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսին է սկսում վերածվել նշանակալից տնտեսական և քաղաքական կենտրոնի: Գորդիոնի մոտ հայտնաբերված ամենավաղ «արքայական» բաղումները (կուրգամաշին) նույնպես թվագրվում են մ.թ.ա. VIII դարի վերջին երրորդով, այսինքն, Միդասի ժամանակներով<sup>10</sup>: Ենթադրվում է նույնիսկ, որ մինչևիմմերական Գորդիոնի բոլոր կորգանները մեկ սերնդի ընթացքում են կառուցվել<sup>11</sup>: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ Գորդիաս անունը վերաբերում է փոյուզական էպիգրաֆիկայում:

Այսպիսով, վերը քերված սովյալները բույլ են տալիս ենթադրելու, որ Գորդիաս-Միդասի ժամանակներում է միայն Գորդիոնը վերածվում պետության քաղաքական և տնտեսական-նշակութային կենտրոնի, ընդ որում այս զարգացումը քաղական արագ է ընթացել, այսինքն, որոշակիորեն այն կարելի է համարել «թոփաբաժն» վերելք: Այս առումով անհնար է չիլիստոսակել Հուստինոսի և Արիստոսի մոտ սրահպանված այն տեղեկությունը, ըստ որի, մինչև Միդասի գահակալումը Փռյուզիայում անիշխանություն է տիրել (տե՛ս վերը):

Սակայն եթե Գորդիաս-Միդասի դիմաստիայի խնդիրը

հնարավոր է դիտել մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսին Գորղիոնոմ հաստատվելու լույսի տակ, ապա քիչ այլ է Ասկանիոս-Ասիսո(ի)սի հարաբերակցության հարցը:

Ինչպես նշվեց վերը, Ասկանիոսը վկայված է ընդամենը երկու անգամ «Իլիականոմ»՝ որպես Տրոյական Պատերազմի ժամանակակից և մասնակից, որի անունը առնչվում է Սանգարիոս գետի հետ (Մեծ Փոյուզիայի բուն տարածքը): Այսինքն, Ասկանիոսը չէր կարող լինել Գորղիաս-Միդասի անմիջական մախորդը, քանի որ նրանց բաժանում է առնվազն 500 տարի: Ավելին, անտիկ ավանդությունը չի էլ փորձում առնչել Ասկանիոսին Գորղիաս-Միդասի հետ: Այդ կապը ենթադրվում է միայն մի կողմից Ասկանիոս - Սանգարիոսի հովիտ և Գորղիաս+Միդաս - Գորղիոն տեղայնացման ֆոնի վրա: Ինչ կարող էր նկատի ունենալ Հոմերոսը՝ Գորղիաս-Միդասի ժամանակակիցը, ի դեմս Ասկանիոսի, որը Տրոսդա էր եկել Սանգարիոսի հովտից: Եվ ինչու ո՞չ Հոմերոսը, ո՞չ էլ Պիսիստրատի օրոք Տրոյական Պատերազմին նվիրված ասքի բազմաթիվ տարբերակները ի մի քերտղները, նաև Հերոդոտոսը, չեն փորձել որևէ կերպ Ասկանիոսին և Գորղիաս-Միդաս գույզին միավորել որպես Փոյուզիայի արքաներ՝ մեկ դինաստիայի մեջ, կամ, ընդհակառակը, բացատրել երկրորդի ծագումնաբանությունը, ինչպես դա արվել է Լիդիայի արքայատոհմերի առնչությամբ:

Թվում է, այս իրադրությունը կարելի է սքարզել հետևյալ կերպ: Արևմտյան Փոքր Ասիայի հոնիական քնակչության սպառկեթացմամբ, Սանգարիոսի հովտի փոյուզացիները առավելապես այն էրնիկական խմբի ներկայացուցիչներն էին, ովքեր Խեթական տերության տրոհման շրջանում աստիճանաբար ներթափանցել էին այս տարածքը և որոնց հույները համեմատաբար լավ էին ճանաչում որպես իրենց անմիջական արևելյան հարևանների: Չնայած Գորղիոնոմ վոյուզացիների մոտքը հնագիտորեն դժվար է պարզել<sup>20</sup>, սակայն համեմատաբար հեշտ է որոշել հյուսիսարևմտյան և արևմտյան Փոքր Ասիայից Սանգարիոսի հովիտ ներթափանցած փոյուզական և այլ էրնիկական խմբերի՝ դեպի արևելք տարածման սահմանները: Դրանք մոտավորապես հասնում են մինչև Հալիսի արևմտյան հոսանքի շրջանը և Թուզ լճի

կյոսիսային տիղ<sup>2</sup>։ Հայիսի հոսանքով պարլիակված կենտրոնական Փոքր Ասիայում, ինչպես նաև Հայիսից հարավ փոյուզական ներքախոսցման վկայոյուններ չկան ընդհուպ մինչև մ.թ.ա. VIII դարը։ Այտեղ, ինչպես նշվեց վերը, հայտնի է նախկինում «Հին փոյուզական», իսկ այժմ «Ալիշար IV» կոչվող մշակոյթը։ Վերջինիս աարածքը միաժամանակ հայտնի է որպես լոմիակրան պետականոյան արեալ։ Փոյուզիայից արևելք ընկած շրջանները, ընդհուպ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, քացարծակապես անձանոր են եղել անտիկ աղբոյուններին։

Հոներոսի պատկերացմամբ, Ասկանիոսը անձնաւորել է Մեծ Փոյուզիայում գտնվող Ասկանիոս լճի շրջակայքի փոյուզացիներին։ Ասկանիոսը, ինչպես և Միգրոնեան ու Օտրևը, պատմական անձինք չեն եղել, որպեսզի հետագայի հեղինակները փորձելին նյաանց մոցնել փոյուզական պետոյան արքաների ցոզակը։

Երե վերոնիշյալ մեկնաբանոյունը որևէ հիւր ունի, ապա կծագի մի կարևոր խնդրի մեկնաբանման անհրաժեշտոյուն։ Ինչպես են հարաբերակցվում Ասկանիոսը և Ատունայի Ասխու(ի)սը։ Արդոյր այս որոշակի նմանոյունը պատահականոյան արդունը է։ Մույն հարցի պատասխանը բարդ է այն առումով, որ Ատունայի արքայի անունը հազիվ թե ամրագրվեր արևմտյան Փոքր Ասիայի քազմարիվ մոյնամուն տեղանունների և ջրանունների վրա (տե՛ս վերը)։ վերջիններա ակնհայտորեն այլ աղբոյութ պիտի ունենան։ Երե այս նմանոյունը թվագյալ չէ, ապա միակ տրամաբանական քազատրոյունը հետևյալը կարող է լինել։

Մինչեհեղենիստական շրջանի Փոքր Ասիայի քնակոյունան մեջ կարող էր ինչ-որ եղանակով պահպանվել կիշոդոյուն Փոյուզիայի անմիջական հարևան պետոյան արքա Ասխու(ի)սի մասին, որին հաջորդած Կուրտիսի անունը, թերևս, հասել էր հույն հեղինակներին որպես Միդասի հայր (իլականում սերմնակից)։

Այժմ անցնենք աշխատոյան այս բաժնի անխոմմանը։

Վերը ներկայացված վառտերի ու վաստարկների թելադրանքով հնարավոր ենք համարում առաջարկելու հետևյալ եղակազոյունները։

Մ.թ.ա.VIII դարի երկրորդ կեսին դեպի արևելյան Փոքր Ասիա ընթացած ասորեստանյան շարունակական էքսպանսիայի հետևանքով Մեկիդի և թարալի լուվիական պետությունները քաղաքական անկում ապրեցին: Լուվիական ծագման արքայատոհմերի ոչնչացումը կամ վերաբնակեցումը, ազնվականության և բնակչության տեղահանությունները պիտի առաջ քերին քաղաքական և սոցիալական վակուում: Այս իրավիճակում կարող էին նպաստալիոր պայմաններ ստեղծվել տարածաշրջանի մեկ այլ էթնիկական խմբի ծավալման և քաղաքական իշխանության հասնելու համար: Այդպիսի քաղաքական ուժ պիտի դիտել Ասունան, որը, հաջողության հասնելով Սարգոն II-ի նկատմամբ, հավանաբար, այսին Սինաքերիբի կատախարման սկզբներին իրեն էր ենթարկել Մեկիդի տարածքը, կամ գոնե դրա արևմուտքը (Թիլգարիմմուն): Սինաքերիբի և նրա հաջորդների օրոք (Ասարհադդոն և Աշշուբանապալ) այս նույն տարածքում հիշատակվող Մեկիդի (կամ Մեկիդի ու թարալի) անկախ պետության կապը վերոնիշյալ նորաստեղծ պետականության հետ, բվում է, կասկածից վեր է: Դժվար է ասել, թե որքան է շարունակվել այս պետության ինքնուրույն գոյությունը Աշշուբանապալից հետո, հատկապես Ասորեստանի անկման փուլում և դրան հաջորդած ժամանակաշրջանում Մարաստանի և Լիդիայի հակամարտության ընթացքում:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿՅԱՆՆԵՐԸ ԵՎ «ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱՆ»

Ինչպես նշվեց աշխատության սկզբում, նկատի առնելով «թորգոմյան» վարկածը, հայկական ցեղերի ելակետ է դիտվում արևելյան Փոքր Ասիայի այն շրջանը, որն ամփոփված է ժամանակակից Մալաթիայի և Կայսերիի միջև, այսինքն, պատմական Չոբուրդ Հայրը: Այստեղից է ենթադրվում հայկական էրևոսի տեղաշարժը Եփրատից արևելք (ենթադրաբար, մ.թ.ա.VII-VI դարերում կամ դրանից առաջ), որի արդյունքում Հայկական լեռնաշխարհը աստիճանաբար հայացել է: Սակայն, միևնույն ժամանակ, նշված տարածաշրջանի՝ օտար աղբյուրներով (խերական ու ասորեստանյան սեպագիր, փոքրասիական հիերոգլիֆային) վերալված պատմությունը զգալիորեն խոչընդոտում է այստեղ առնվազն մ.թ.ա.XVII-VIII դարերի ընթացքում սովոր հայալեզու տարրի առկայության մասին ենթադրությանը: Այս ժամանակահատվածի մեջ դժվար է տեղավորել Հայկի և նրա սերունդների տեղաշարժերի պատկերը: Վերջինս կարող էր տեղ գտնել այնպիսի տևական ժամանակահատվածում, երբ մի քանի սերունդ շարունակ ընթացել են ժողովուրդների տեղաշարժեր:

Մեր կարծիքով, «Տուն Թորգոմայի» կապը արևելյան Փոքր Ասիայի հետ կարելի է պարզել միայն մի շարք ելակետային խնդիրների հետազոտության շնորհիվ:

### ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿԱԿԸ

Խորենագու օգտագործած սկզբնաղբյուրների խնդիրը տարրեր մասնագետների հատուկ ուսումնասիրության առարկա է եղել՝ և այստեղ հարկ չկա վերաշարադրելու բոլոր կարծիքները: Մասնավորապես միայն մեկ-երկու դիտարկումով, որոնք անմիջականորեն առնչվում են ներկա ուսումնասիրության բննային: Խոսքը Մար Աբասի աղբյուրի հավաստիության և դրանում հաղորդվող տեղեկությունների բնույթի մասին է:

Մար Աբասի անձի և երկի հավատոյության խնդիրը, ըստ մեզ, չի կարող կատարածի առնվել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած զանազան փաստարկների ճնշման տակ (Մար Աբասի անձի անհայտ լինելը օտար հեղինակներին, Նինվեի չլինելը Մար Աբասի ժամանակներում և այլն): Որ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Արեմենյան տեղաբայունը նվաճելուց հետո խելասպես ոմանք ձեռնարկել են միջագետքյան հարուստ գրավոր հուշարձանների հիման վրա այս տարածաշրջանի պետությունների՝ Ասորեստանի և Բաբելոնիայի պատմությունը շարադրելու գործը (Բերոսոս, Քոնսիաս), անվիճելի փաստ է: Հենց այն հանգամանքը, որ Խորենացուն ծանոթ է այս երևույթը, ինքնին արդեն կարող է վկայել մարաբասյան աղբյուրի գոյության օգուին: Նմանապես, տարօրինակ չէ, որ նման սկզբնաղբյուր կարող էր պահպանվել պարթևական արքունի դիվանում, մի երկրում, որը Ասորեստանն ու Բաբելոնիան նվաճած Արեմենյան պետության քաղաքական ժառանգորդն էր: Ի վերջո, ինչու չէր կարող պարթևական ծագում ունեցող Հայքի արքա Վաղարշակը (ով էլ որ բարեվկամ լինի այս անվան տակ) փորձել իր պետության պատմության վերաբերյալ ձեռք բերել ալիքի շատ և հախատի սկզբնաղբյուրներ, բան պարունակվել են ժամանակի հայտնի աշխատություններում: Մար Աբասի հավաքած նյութերը կարող էին ի պահ տրվել հայոց արքունիքում, այլ ոչ թե կրասպարակվին, դառնալով ժամանակի պատմագիրների ընդհանուր սեփականությունը:

Ինչ վերաբերում է Մարաբասյան աղբյուրի բովանդակությանը, ապա այստեղ խնդիրը անհամեմատ ալիքի բաղդ է: Թե ինչպիսի բովանդակություն կարող էին ունենալ միջագետքյան սեպագիր աղբյուրները հարևան երկրների վերաբերյալ պարունակող տեղեկությունների առումով, համրահայտ է (արշավանքների նկարագրություն, հարկերի հավաքում, օտար բնակչության վերաբնակեցում Միջագետքում, երբեմն՝ այլ երկրներից որսկյալ աշխատուժի հարկադիր կամ կամավոր ներմուծում և այլն): Այստեղ այլ երկրների վերաբերյալ հաղորդվող տեղեկությունները խիստ սահմանափակ են տեղանունների և



անձնանունների բանակի առումով: Ընդ որում խոսք անգամ չի կարող լինել որևէ երկրի պատմության սխտեմատիկ շարադրանքի մասին, ինչպիսին ոմանց կարող է ներկայանալ Մար Աբասի երկը: Այս առթիվ անկրածիչառ ենք համարում բեռանալ երկու ելակետային խնդիրների վրա, ոլոմք, մեր կարծիքով, պիտի նկատի ունենալ Խորենացու հիմնական սկզբնաղբյուրը քննարկելիս:

1) Ընդարձակ Հայկական լեռնաշխարհի մեծաքանակ քաղաքական միավորներից հատկապես որի վերաբերյալ կարող էր Մար Աբասը տեղեկություններ քաղել պարթևական արքունի դիվանում:

2) Կարող էր արդյոք Մար Աբասը (իսկ հետո նաև՝ Խորենացին) այդ «նախնական Հայքին» վերաբերող օտար սկզբնաղբյուրների անվանաբանական նյութը համադրել բուն հայոց բանավոր ավանդության և մեհենական պատմությունների համապատասխան նյութերի հետ, ընդ որում հավաստիության բավարար մակարդակով:

Այս հարցերը հետո են հոեոտրական երանգավորումից: Իսկապես, ինչպես կարող էր ասորի հեղինակը կողմնորոշվել վերոհիշյալ խնդիրներում:

#### **ՀԵՐՔՆԱԿԻ ՊԵՏԱԴԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՈՐՏՈՒԿԱՆ ՏԻՊՈՂԱՆՈՒՄ**

Մինչև վերջին շրջանը Հայկի տոհմի ներկայացուցիչների անունների ստուգաբանությունը որևէ չոչափելի աղբյուրի չի հանդիպել: 'Իե Ն.Էմինը գտնում էր, որ հայկյանների անունները խառնածին բնույթ ունեն, այստեղ ներկայացված են սեմական (Արամանեակ, Արամայիս, Ամասիս և այլն), իրանական (Տիգրան), հունական (Կարոս), հայկական (Գեղամ, Հարնա, Անուշավան) և այլ անուններ<sup>67</sup>: Նման եզրակացության է հանգել նաև Գ.Ջահուկյանը<sup>68</sup>: Ինչպես կարելի է մեկնաբանել այդ երևույթը: Ինչու էին հայկյանների անունները ծագում միջանցից տարրեր էրնդիզիական համալիրներից: Իհարկե, ցանկության դեպքում կարելի էր մատնանշել ավելի ուշ շրջանի հայկական իրականու-

թյունը (Բազմաստուծիներ, Ռուբինյաններ և այլն), այսինքն, վկայակոչել հարևան քաղաքակրթությունների քաղաքական և մշակութային մեծ ազդեցությունը: Սակայն պատմական անալոզիան ցույց է տալիս, որ արքայատոհմերը սովորաբար ներկայացված են լինում գրեթե բացառապես սեփական ղինաստիական անուններով: Բացասությունները հիմնականում վերաբերում են օտար ծագման արքաների բռնի գահակալմանը:

Ինչ վերաբերում է հայոց նահապետների անուններին և նրանց կերպարներին, ապա տվյալ պարագայում ակնհայտորեն գործ ունենք հայոց հնագույն առասպելաբանության հետ<sup>20</sup>: Վերջերս Ա. Պետրոսյանի կողմից այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ Խորենացու հիշատակած նահապետները ներկայացնում են հնդեվրոպական ծագման հայոց հնագույն դիցաբանը<sup>21</sup>: Այս տեսակետի ճշմարտացիության օգտին են վկայում բարձր կովաններ, սակայն այն մի կարևոր պարզաբանման կարիք ունի:

Արդյոք Պատմահոր կողմից ժողովրդական բանահյուսության միջոցով ներկայացվող հայոց հնագույն առախածների կերպարները ինչ-որ եղանակով հարմարեցված չեն այլ աղբյուրների (օրինակ, Մար Աբաս Կատինայի կամ Նդեմիայի արխիվի) միջոցով նրան հասած տեղեկություններին, որոնք վերաբերում են հայկական էթնոսի տեղայնացմանը, նրա հարաբերություններին հարևան պետությունների հետ և այլն: Այս հարցադրումը կարևոր է այն առումով, որ հնարավորություն կրճճեի իրատեսական դիրքերից մոտենալու խնդրին և մշակելու Խորենացու երկի պատմականության աստիճանը որոշելու չափանիշներ: Ստորև փորձենք ներկայացնել մեր դիրքորոշումը այս խնդրի առնչությամբ:

Հայտնի է, որ հայոց առաջին նահապետների գործունեության վերաբերյալ Խորենացին, բացի գոտանական երգերից, օգտվել է Մար Աբասի կողմից պարթևական արքունական արխիվում պահվող քաղղեական, ասորեստանյան, բուն պարթևական աղբյուրներից, ինչպես նաև անտիկ հեղինակների երկերից (Աբյուղենոս, Կեֆալիոն, Օլիմպիոյորոս): Խորենացին

ուղղակի հայտնում է, որ նահապետների անունները, իսկ շատ դեպքերում նաև գործունեության մասին տեղեկությունները վերցրել է հենց այդ օտար աղբյուրներից: Ընդ որում ստվում է հետևյալը. «Ապա եթե ասիցես, ուստի մեզ և զնախնեացն մերոց գիտե՛լ գանուանս ախուլես, իսկ գրագմաց և զգործս՝ ասեմ. ի հնոցն դիսանաց Քարդէացոց, Ատրեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և զործոց նոցա ի քարտէս արջունի, իբրև գործակալաց և վերականգնուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց» (Գիրք Ա, ԻԱ):

Այս հաղորդման կարևորությունը դժվար է վիճարկել, քանի որ այն մի յուրատեսակ բանալի կարող է դառնալ առաջին նահապետների և «Հայքի» մեկնաբանման գործում:

Եթե ելնենք ձևական տրամաբանության դիրքերից, ապա առաջին Հայկյանների պատմականության խնդրի լուծումը կարելի է պատկերացնել հետևյալ անկյունաքարային հարցերի ճշգրտման միջոցով.

- 1) Հայկի և հայկյանների գործունեության տեղայնացում
- 2) «Հայքի» հարևան երկրների իդենտիֆիկացիա
- 3) «Հայքի» կարգավիճակը:

Արդեն Հայկի բոտան Արամանյակի օրոք Հայկական լեռնաշխարհի մի զգալի մասը Հայկյաններին է պատկանել: Եթե սրան ավելացնենք Արամի հեռահար արշավանքները դեպի հարավ (Ատրիոց դաշտ և Ջալասուլ լեռ՝ Հյուսիսային Միջագետքում) և արևմուտք (Մաժար-Կեսարիա), ապա կստացվի մի խիստ հակասական պատկեր: Տիրելով նման վիրիսայի տարածքի, թե՛ Արամը, թե՛ նրա նախորդներն ու հաջորդները գտնվել են Ատրեստանի գերիշխանության ներքո:

Կարող է այդպիսի խոշոր քաղաքական կազմավորումը տեղավորվել հինարևելյան գրավոր աղբյուրներով համեմատաբար լավ վկայված պատկերի մեջ: Բնականաբար, ոչ մինչև Ուրարտական տերության կազմավորումը: Եթե դա Ուրարտուն չի եղել, մի ենթադրություն, որ դժվար է վիճարկել<sup>10</sup>, ապա նշանակում է, Խորենացու «Հայքը» կարող էր լինել մեկը այն փոքր քաղաքական միավորներից, որոնք գտնվել են Ատրեստանի

քաղաքական գերիշխանության ոլորտում Հայկական լեռնաշխարհի հարստում և արևմուտքում: Արմավիր քաղաքի հիշատակությունը ակնհայտորեն ուշ ժամանակների իրավիճակի ներդրում պիտի համարել:

«Հայքի» տեղայնացման գործում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ դիտարկումը: Առաջին վեց մահապետներից (չհաշված Թորգոմին) միայն Հայկը և մասամբ Արամանյակն են առնչվել Ասորեստանի հետ՝ ապստամբությունը Բեյի դեմ և ճակատամարտը Հայոցձորում: Հաջորդ չորս սելուոդները (Արամայիս, Ամասիս, Գեղամ, Հարմա), իրենց ճյուղավորումներով հանդերձ, զբաղված էին Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների յուրացմամբ: Ի տարբերություն սրանց, հաջորդ չորս մահապետների գործունեությունը այս կամ այն ձևով կրկին առնչվում է Ասորեստանի հետ.

*Արամ - Նինու*

*Արա Գեղեցիկ - Նինու+Շամիրամ*

*Արայան Արա - Շամիրամ*

*Անուշավան - Ջամեսեր+Նինվաս*

Կրկին ավելի շուտ տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ Արամանյակի գործունեությունից հետո բավական երկար ժամանակ «Հայքը» կամ 1) գտնվել է Ասորեստանի տիրապետության տակ՝ հավատարիմ իր կախյալ կարգավիճակին, կամ, քնդիակառակը, 2) չի գտնվել Ասորեստանի տիրապետության տակ: Կարելի է արդյոք, նկատի ունենալով առաջին Հայկյանների գործունեության աշխարհագրությունը (տե՛ս վերը), Ասորեստանից կախյալ լինելու հանգամանքը (բացի Արամայիս-Հարմա հաստիճից), փորձել որոշել «Հայքի» մոտավոր տեղայնացումը և այն ժամանակահատվածը, երբ կարող էր գոյություն ունենալ սույն քաղաքական միավորը: Մինչև այս խնդրին անցնելը, հարկ է քննարկել դրան առնչվող մի հանգամանք, որը ատկառումնափորություններում, բվում է, բերի է լուսաբանված: Խոսքը առաջին Հայկյանների գործունեության մի յուրահատկության մասին է:

Հայկը և նրանից սերված առաջին Հայկյանները, իրենց ճյուղավորումների հետ միասին, մեծ շարժումակոթյուն են դրսևորում: Այսպես, Բեյի նկատմամբ տալիս հարգանակլից հետո Հայկը հաստատվում է Հարբում: Նրա մահից հետո որդին Արամանյակը, Հարբում բողնելով որդիներին (Խոռ և Մանախազ), հիմնվում է Արագածոտնում: Արամայիսի որդին՝ Շարան, հաստատվում է Շիրակում, նույնը նաև՝ Ամասիան և Գեղամը իրենց որդիներով:

Մասնագիտական կարծիքների ճնշող մասը այս կամ այն կերպ հանգում է հետևյալին. Պատմահայրը վերսիշխյալ եղանակով փորձել է ստուգաբանել Հայկական լեռնաշխարհի գավառների և քնակավայրերի անվանումները<sup>21</sup>: Նշվել է միայն, որ, համեմայնելիս Հայկ-Արամանյակ փոքր պիտի այտուցողեր վաղ հայկական գեղերի տեղաշարժերի մասին տեղեկությունները: Եվ իսկպես, առաջին հարյուրից բավական տարօրինակ է Արամանյակի երկր Հարբից դեպի հեռավոր Արագածի շրջան: Նույնքան տարօրինակ պիտի համարել Արմախլոտան իշխող Արամի հեռահար արչավանքները Հյոսիսային Միջագետք և արևելյան Փոքր Ասիա:

Արդյոք մի շարք հաջորդական սերունդների շարունակական տեղաշարժերը համատեղելի են կոնցակտ էքնիկական խմբի և քաղաքական միավորի մասին ենթադրության հետ: «Հայոց սրատնություն» համապատասխան բաժնում չի էլ ակնարկվում Հայկի անմիջական հետնորդներից ոլն՝ մեկի կողմից տոհմի տարբեր ճյուղավորումների նկատմամբ ունեցած գերիշխանության անկախության մասին: Առաջին Հայկյաններից յուրաքանչյուրը իշխել է այն տարածքում, որտեղ ինքը տվյալ պահին քնակվել է: Այսպիսի իրավիճակը, թերևս, ավելի հարմար է մեկնաբանել որպես մի շարք լեզվակից սոմների և գեղերի դարեր տևած ատտիճանական տարածում Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններ, որ կարող էր սկսվել այն հատվածից, որտեղ, ըստ Խորենացու, գործել են Հայկը, Արամանյակը (մինչև Արագածոտն շարժվելը) և Կաղնոսը, այսինքն, Ատրեստանին հարող շրջանից: Որքան էլ որ կենտոնակ լիներ Հայկի տոհմը, այն ի վիճակի չէր յուրացնելու և ժամանակի ընթացքում տիրելու

Լեոնաշխարհի մի զգալի մասին, ընդ որում գերիշխող դիրք ունենալով այնտեղ:

Հիանալիքով վերոհիշյալի վրա, կարելի է առաջարկել առաջին Հայկյանների գործունեության ժամանակաշրջանի վերաբերյալ հետևյալ մեկնաբանությունը.

1) Առաջին Հայկյանների «Հայրը» չէր կարող ներկայացնել մեկ միասնական քաղաքական միավոր՝ Լեոնաշխարհի զգալի մասի ընդգրկմամբ: Այն մի սղայմանական տեղում է, որի տակ սխտի հասկանալ հետագայի Մեծ Հայքի տարածքում ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած հայալեզու և ոչ հայալեզու մեծ թվով քաղաքական միավորներ: Ընդ որում դրանց մի մասը՝ հյուսիս-արևելքում, չէր կարող որևէ կերպ հարաբերակցվել Ասորեստանի հետ:

2) Առաջին Հայկյանների ժամանակաշրջանի գլխավոր բնորոշ առանձնահատկությունը Լեոնաշխարհի տարածքում տիրող քաղաքական անկայունությունն էր, որի ընթացքում մի քանի սերունդ շարունակ բնակչության մեծ շարժունակություն է նկատվել: Վերջինիս առկայությունն արդեն իսկ բացառում է այտուեղ քիչ թե շատ խոշոր քաղաքական միավորի առկայությունը:

Հաստատագրելով վերոհիշյալը, փորձենք, այնուամենայնիվ, մոտավոր գծերով համատեղել առաջին Հայկյանների տարածքի մասին խորհնացու տեղեկությունները հիմարևելյան գրավոր և հմագիտական աղբյուրների նյութերի հետ: Ինչպիսի պատմական ժամանակահատվածում կարող էր Հայկական լեոնաշխարհում ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ 1) այտուեղ գոյություն չի ունեցել խոշոր քաղաքական կազմավորում, 2) մեկ կամ մի շարք քաղաքական միավորներ կախման մեջ են եղել Ասորեստանից, 3) նկատվել է բնակչության մեծ շարժունակություն:

Առկա ուսումնասիրություններում առաջին Հայկյանների ժամանակաշրջանը գերազանցապես բնագրվել է մ.թ.ա. XII դարով կամ քիչ ավելի ուշ շրջանով. Հայկի սղայրադը Բեյլի դեմ դիտվել է թիզլարագաղատար Լ-ի արշավանքների շրջանում Հայկական լեոնաշխարհի հարավ-արևմտյան մասում վերջիվաճակ էրմիլական տեղաշարժերի ենթաուեցուտում<sup>66</sup>: Սակայն այդ դեպքում իսկապես

«Տուն Թորգոմայի» վաղը անհրաժեշտորեն պիտի տեղադրվի ավելի վաղ ժամանակաշրջանում, մի բան, որ այնքան էլ նպատակահարմար չէ (տե՛ս սույն աշխատության Ներածությունը):

Նախորդ քաճմում ներկայացված խնդիրները, կտարված առաջին Հայկյանների մեկնաբանության հետ, ստիպում են փորձել գտնել նոր, ախանդակաճան մոտեցումներից տարբեր լուծումներ: Ստորև համառոտակի ներկայացնենք մեր պատկերացումները, որոնք առայժմ, ինչպիսիք, չեն հենվում հիմնավոր փաստարկների վրա և լուրջ հետազոտության կարիք ունեն: Առաջարկվող վարկածը կարող է առաջին հայացքից տարօրինակ թվալ, սակայն միևնույն ժամանակ ի վիճակի է նոր հեռանկարներ բացելու Խորենացու Հայկյան շարքի ուսումնասիրության ասպարեզում:

Մեր կարծիքով, պարտադիր չէ «Տուն Թորգոմայի» վուլը տեղադրել Հայկին նախորդող ժամանակահատվածում: Եթե «Տուն Թորգոման» նախորդած լիներ Հայկի տեղաշարժերին, ապա պետք է ենթադրել, որ՝ 1) Հայկի տոհմի տեղաշարժերից հետո «թորգոմյան արեալը» պիտի զգալիորեն զրկվեր իր հայկական դիմագծից, 2) մ.թ.ա. VIII-VIդդ. Մելիդ-Թեգարամայի տարածքում ստեղծված պետությունը որևէ կերպ չի առնչվել հայկական էթնոսի հետ, կամ էլ հայալեզու տարրի դերը չնչին պիտի լիներ (ինչը և հավաստվում է Խորենացու ներկայացրած՝ Հայկյանների գործունեության աշխարհագրությամբ):

Սակայն ինչու հնարավոր չէ պատկերացնել, որ Խորենացու կողմից ներկայացված Հայկյանները ամենևին ժամանակագրական կարգով միմյանց հաջորդած նահապետներ չեն: «Տուն Թորգոման» կարող էր ոչ թե նախորդել Հայկյան վուլին, այլ գոյություն ունենալ միաժամանակ: Թվում է, որ նման մեկնաբանության համար հնարավոր է ներկայացնել մի շարք փաստարկներ: Վերջիններս առանձին-առանձին չեն կարող եղանակ առեղծել, սակայն միասնական դաշտում դիտարկվելիս ի վիճակի են առնվազն համապատասխան վարկած ձևավորել:

#### *Առումայի արքայանունները.*

Առումայի՝ գրավոր աղբյուրներով վկայված երկու արքայանունները՝ Ասխու(ի)ս և Կուրտիս բախակաճան հետաքրքիր



մտորումների տեղիք են տալիս: Վերը նշվեց այս արքաների անունների հնարավոր կապը հոմերոսյան Ասկանիոսի և Մեծ Փոյուզիայի արքա Գորդիասի հետ: Սրան զուգահեռ, Ասխու(ի)ս անունը ունի մեկ այլ աղերս, այս անգամ Ատունայից արևեք՝ լավիական Մելիդ-Մալարիայում, ի դեմս վերջինիս արքա Սախտսի: Մելիդյան Սախտսի անունը ժամանակին իրավացիորեն համարվել է Ուրարտուի արքա Մալարիի II-ի արձանագրություններից մեկում հիշատակվող Շախտի անվան հետ<sup>10</sup>: Սախտսը հայտնի է իր ողորտ կազմած արձանագրությունից (ՏՐԶԻ) <sup>11</sup>, որը հայտնաբերվել է Մալարիայից շուրջ 40 կմ հյուսիս՝ Հեկիմխանից Հասանչեկերի տանող ավտոմայրուղուց քիչ արևեք: Վերոնշյալ երկու անձնավորությունների նույնության խնդիրը հիմնականում կախված է նրանց ողորտների անունների համարումից: Մեծուայի մոտ հիշատակվում է Մելիդի արքա Խիլարուադաս, իսկ ՏՐԶԻ-ում արձանագրության հեղինակի անունը առայժմ դժվար է ընթերցվում՝ X-ն-CERVUS<sup>12</sup>: Վերջինիս երկրորդ բաղադրիչը՝ CERVUS-ը, ընթերցվում է Ruwa/Ruwa(n)ta/Runtiyas, որ համապատասխանում է ուրարտական Խիլարուադայի երկրորդ բաղադրիչին: Չնայած դեռևս վաղ է խոսել ուրարտական Շախտի և մելիդյան Սախտսի նույնացման մասին, սակայն այդպիսի տարբերակը ավելի հավանական է, քան հակառակը: Հատկապես, եթե նկատի ունենանք, որ ՏՐԶԻ-ն հնագրական հիմքի վրա պիտի բվագրել մ.թ.ա.VIII դարով, իսկ Շախտն Մեծուայի ժամանակակիցը պիտի լիներ:

Եթե Ատունայի արքայի անվան կապը հոմերոսյան Ասկանիոսի հետ խիստ բեական է, ապա այլ է դրա մելիդյան զուգահեռը: Ժամանակագրորեն այս երկուսը չեն կարող նույնանալ, քանի որ Մելիդի արքա Սախտսը բվագրվում է մ.թ.ա. IX դարի վերջերից ոչ վաղ, այնինչ Ատունայի արքան ակնհայտորեն իշխել է մ.թ.ա.VIII դարի կեսերից ոչ վաղ: Ելվու արքաները նույնական չեն, սակայն կարող էին սրատկանել միևմույն էրնիվական արևալին: Այս ենթադրությունը անբացակայում է Ատունայի արքա Ասխու(ի)սի ողորտ՝ Կուրտիսի անվան ակնհայտ ոչ խեղա-լավիական բնույթով: (Կարնկլի<sup>13</sup> է արդյոք առաջարկել Ատունայի արքայատոհմի կապը

Մելիդի արքայատոհմի հետ:)

Ճիշտ է, այսօր վաստեղի քաջակայության պայմաններում հնարավոր չէ պարզել, արդյոք Ատունայի արքայատոհմը Ատունայում տեղաբնիկ է եղել, թե եկվոր ինչ ուր այլ շրջանից: Մակայն դրա մելիդյան ելքի մասին ենթադրությունը այնքան էլ անհիտվանական չէ: Մ.թ.ա. IX դարի վերջերից սկսված Ուրարտուի էքսպանսիան դեպի արևմուտք կարող էր ստիպել տեղի բնակչության որոշ մասին տեղաշարժվելու արևմուտք:

Այստեղ անհնար է խուսափել հետևյալ հարցադրումից. ինչու է հայոց մատենագրության մեջ Մովսր ևսահանգի մի մասը (այսօրվա Դերսիմի շրջանը) կոչվել «Մովսր Շահունի»<sup>66</sup>: Չէր կարող արդյոք Մովսրի «Շահունի» մակդիրը որևէ կերպ առնչվել վերոհիշյալ վերինեմփրատյան Մելիդի արքայի անվան հետ (ուրարտական աղբյուրների Շախու, հիեքուզ, Սախու): Որքան հայտնի է, առայժմ միայն Գ.ր. Դավանցյանն է ենթադրել «Շահունի» մակդիրի կապը ուրարտական արձանագրություններում հիշատակվող Մելիդի արքա Շախուի անվան հետ:<sup>67</sup>

Սույն աշխատության սկզբում նշվեց, որ հայոց մատենագրության մեջ զուգահեռաբար կիրառվում են «բորզոյան» և «ասրանազյան» մակդիրները: Հայաստանների մոտ գերիշխում է այն տեսակետը, որ «ասրանազյան» տերմինի կիրառությունը, հավանաբար, իր հիմքում ունի ինչ-որ մի ժամանակ (մ.թ.ա. VII դարից ոչ վաղ) կլինմերա-սկյութական տարրի ներմուծում կազմավորվող հայ ժողովրդի զանգվածի մեջ<sup>68</sup>: Դրա վկայություն են դիտվում Խորենացու կողմից ավանդված հայոց նահապետներից Սկայորդու և նրա որդի Պարույրի անունները. վերջինիս անվան նախահիմքը, ամենայն հավանականությամբ, կարող էր լինել ասորեստանյան աղբյուրների հիշատակած սկյութական առաջնորդներից մեկի՝ Պարտատուայի անունը: Ֆ.Տեր-Մալախյանը կարծիքով<sup>69</sup>, Ասորեստանի արքա Ասարխադդնի դեպի Շուրրիա (Սասուն) մ.թ.ա. 673 թ. (ըստ հեղինակի՝ 672 թ.) կազմակերպած արշավանքին մասնակցած սկյութները Պարտատուայի գլխավորությամբ կարող էին հաստատվել այստեղ և ստեղծել իրենց քաղաքությունը. վերջինս էլ «Ատուխաձաշնի»

հիշատակած «Աշկենագի քաղաքորությունն է»: Հետագայում այս քաղաքորությունը մտավ հայկական պետության մեջ, իսկ Պարտատուան Պարույր անունով ընկալվեց որպես հայոց առաջին արքա:

Ամենին չբերագնահատելով հայոց էրնոգենեզում սկյութական տարրի խաղաղած դերը և Պարտատուայի հնարավոր սկյութական ծագումը, այնուամենայնիվ կարծում ենք, որ կարելի է առաջարկել սույն խնդրի մեկ այլ, այլընտրանքային մեկնաբանություն:

«Աստվածաշնչում» պահպանված՝ ժողովուրդների ծագումնաբանական ծառը քաջ հայտնի է բոլոր մասնագետներին: Խոսքը Հարիբյանների մասին է: Ահա այստեղ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու տարբերակի, մեր առջև հանում է մի ուշագրավ պատկեր:

*«Թիրաս, որ երբորդ էր Յարթթ՝ ծնաւ երկա որդիս՝  
զԱսրանագ, զԴիխառ եւ զԹորգոմ ... Եւ Ասրանագայ, որ մախ  
զմերագնեախս սեփհայրանեայ, յորում տիրեալ զԱսրանագնանն  
մախ անուանեալ յիր անուն նուաճէր տուն Թորգոմայ: Արդ  
այսպէս ինա Ասրանագեան զմեզ եւ տուն Թորգոմայ, եւ այսպէս քեզ  
հաստատմասցին, որ փասն մահապետութեան ազգիս է բան,  
թեպետեռ ոմանք այլազգայար և ոմանք այլաբանաբար գրուցաց  
զԱսր տան» (Ըջ 11):*

Այստեղ պատմագիրը շփոթել է Թիրասին Գոմերի հետ. «Աստվածաշնչում» Ասրանագը, Բիլխառը և Թորգոմը Գոմերի որդիներն են, այլ ոչ Թիրասի, սակայն դա չէ խնդիրը: Անոթ բերված հատվածում ուղղակի նշվում է այն մասին, որ սկզբում հայոց ազգը կոչվել է «Ասրանագան», իսկ այնուհետև, զարով իշխանության, Թորգոմը այն կոչել է իր անունով՝ «Թորգոմյան»:

Մենք նպատակ չունենք հանգամանորեն քննարկելու Աստվածաշնչային ծագումնաբանության հետ առնչվող բոլոր խնդիրները, մասնավորապես որ Դրասխանակերտցին կարող էր նաև իր վերոհիշյալ մեկնաբանության համար որևէ հավաստի սկզբնաղբյուր չունենալ: Մակայն, միևնույն ժամանակ, սույն մեկնաբանությունը ուղղակի անխաղիվ կապի մեջ է գտնվում մեր

հետազոտության առարկայի հետ և մենք չենք կարող այն շրջանցել: Ռատի, չխորանալով Գրասխանակերտցու աղբյուրների հատկատիրության խնդրի մեջ, միայն արձամագրենք վերոհիշյալ հատվածից բխող եզրակացությունը, այն է՝ «Ասքանազյան» վուլը մախորդել է «Թորգոմյան» վուլին: Աշխատության համապատասխան բաժնում խուլից Ատրեստանի արքա Սինաբերիքի կողմից հիշատակված՝ Թիլգարիմնոտում պետություն հիմնած ոմն Գուրդիի և այս անվան հնարավոր առնչությունների մասին բարայան Ատունայի արքայի կամ նրա անվան հետ: Թիլգարիմնոտում Գուրդիի իշխանության գալու ժամանակը մոտավորապես պիտի թվագրել մ.թ.ա.VIII դարի վերջերով կամ VII դարի սկզբներով, այսինքն, Սարգոն II-ի կատավարման վերջին վուլից մինչև մ.թ.ա. 696 թ. ընկած հատվածում: Սույնով կարծես զծագրվում է մի ուշագրավ պատկեր.

ա) Մելլոյի արքա Սախոս (մ.թ.ա.IX դարի վերջ) - Թիլգարիմնոտի արքա Գուրդի:

բ) Ատունայի արքա Ասխու(ի)ս (մ.թ.ա.VIII դարի կեսեր) - նրա արքա Կուրտիս, Սարգոնի հակառակորդ Գուրդի (մ.թ.ա.705թ.), Թիլգարիմնոտի արքա Գուրդի:

Վերոհիշյալ զույգերը միմյանց հետ հարաբերակցվում են ինչպես աշխարհագրական, այնպես էլ անվանական մույնության տեսանկյունից: Այսինքն, մի կողմից առկա են Ասխու(ի)ս-Սախոս անունը կրող երկու տարբեր արքաներ, մյուս կողմից՝ Թիլգարիմնոտ քաղաքը (իր հնարավոր «Տուն Թորգոմայ») համարժեքով:

Այժմ վործենք պարզել մի կարևոր խնդիր: Ինչ կարող էին նկատի ունենալ հայ մատենագիրները «Ասքանազյան ազգ» տերմինի կիրառումով: Հնարավոր են մի քանի տարբերակներ՝ ա) ցեղանուն (որևէ հայալեզու կամ ոչ հայալեզու էթնիկական խումբ, որը լուրջ մասնակցություն է քերել հայոց էթնոգենեզին), բ) տեղանուն (որևէ տարածք, որը հանդիսացել է հայոց էթնոգենեզի կարևորագույն արեալներից մեկը), գ) անձնանուն (հայոց անվանադիր մախնիներից մեկը, որը խորենացու մոտ արդեն պատմական անձնավորություն չէ):

Այս տարբերակներից առաջինը բավական լուրջ

կիմնավորում ունի ի դեմս սկյութական վարկածի (տե՛ս վերը): «Առավաճաշնչում» իրոք սույն տեքստին տակ հասկացվել է ինչ-որ սկյութական քաղաքական միավոր, չնայած առ այսօր պարզ չէ դրա տեղացությունը: Սակայն խնդիրը տվյալ պարագայում ոչ թե այդ սկյութական բազավորության տեղադրությունն է, այլ դրա հետ հայոց քննությանը առնչելու հայ պատմագրության մեջ տեղ գտած միտումը, ինչպես տեսանք վերը Դյասխասնակերպցու երկից բերված հատվածում: Ինչը կարող էր տալու վարկել այդպես: Ինչու պիտի Թորգոմյանների գրադեցրած տարածքը նախապես գտնվեր Ասբանագյանների, այսինքն՝ սկյութների գերիշխանության տակ: Հայտնի է, որ սկյութների արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ տեղ են գտել մ.թ.ա.VII դարի առաջին կեսից ոչ վաղ, մի հանգամանք, որ, ըստ մեզ, լուրջ խոչընդոտ է սկյութական վարկածի ընդունման դեմ: Առկածի կիման վրա, ինտրկե, չի կարելի բացառել հայոց էթնոկենտրոն սկյութական (նաև՝ կիմնեղական) տարրի որոշակի մասնակցությունը: Սակայն այդ դեպքում ինչպես կարելի է բացատրել Խորենացու այն հաղորդումը, թե Պարույր Արայորդին (եթե այս պատմական անձնավորությունը իսկապես առնչվում է սկյութական էթնոսի հետ) Հայկի տոհմից էր, որն առաջինը հասավ արքայական իշխանության: Ինչպես կարող էր մ.թ.ա.VIII դ. (կամ նույնիսկ ավելի վաղ) Հայկական լեռնաշխարհում հայտնված սկյութական ծագում ունեցող էթնիկական խմբի ներկայացուցիչը համարվել Հայկյան տոհմի շատավիղ: Այստեղ տեղին է նշել Գ.Ջախուկյանի կարծիքն այն մասին, որ Արայորդի անունը, թերևս, կարող էր ծագել ոչ թե սակերի, այլ բրակյան *սկայ* գեղանունից<sup>26</sup>:

Այսպիսով, հարցադրումները ավելի շատ են, իսկ դրանց լուծման համար հնարավոր են մեկից ավելի տարբերակներ: Առայժմ, ելնելով փաստերի ընձեռած հնարավորություններից, կարելի է միայն առաջարկել որոշ ուղենիշներ՝ ապագայում ճշգրտվելու կամ ժխտվելու միտումով: Ըստ այդմ, սույն աշխատության մեջ փորձենք ներկայացնել մի այդպիսի կանխավարկած:

Հայ մատենագրության մեջ ի սկզբանե արձատավորված

Ասրանազյան-Թորգոնյան վարկածը, չնայած ակնհայտորեն Աստվածաշնչային փոխառություն է, սակայն հիմնված պիտի լինի հայոց էթնոգենեզի վրայի վերաբերյալ քանակոր ափանցության և որոշ չափով գրավոր աղբյուրների իրական տվյալների վրա: <sup>7</sup>Իժևար է ասել, թե որքանով են Աստվածաշնչային Ասրանազը և Թորգոնը ներկայացրել կազմավորվող հայ ժողովրդի կենսաբանական և լեզվաձևաբանական միջուկը: Ինչպես միշտ նկատել է Վ.Ինգլի-զյանը<sup>8</sup>, քանի որ Աստվածաշնչում Ասրանազը և Թորգոնը եղբայրներ են, ուստի չեն կարող միևնույն ժողովրդի նախահայրերը լինել: Սակայն այնուհետև նա կարծիք է հայտնում, որ այս երկու ափանցություններից միայն մեկը, այն է՝ «թորգոնյանը» պիտի գոյություն ունենար, դրանով իսկ բացառելով «ասրանազյան» ափանցության հին արմատները: Հեղինակի կարծիքով, նման ենթադրության հիմք կարող է ծառայել այն, որ Խորենացուն անձանոր է «ասրանազյան» վարկածը:

Արդյոք դա այդպես է Աշխատության տույն բաժնի սկզբում նշվեց, որ առաջին Հայկյանների «Հայրը», հավանաբար, պայմանական մի տերմին է, որում պիտի ընդգրկված լինեին Հայկական լեոնաշխարհի մի շարք քաղաքական միավորները (ինարավոր է, նաև՝ ոչ հայալեզու): Ավանդ առավելագույնս վերաբերում է Վերին Եփրատի ավազանին, հատկապես դրա աջափնյա գոտուն, այդ թվում՝ Թեգարամային: Մ.թ.ա.VIII-VIIIդդ. այս շրջաններում անկա են էթնիկական-ժողովրդագրական բնույթի ակնառու փոխվտություններ: Այդ մասին նշվեց վերը (տե՛ս «Մեյդո-ճարալի նոր էթնիկական տարրի խնդիրը» րաժինը): Այստեղ պիտի ավելացնել մի կարևոր հանգամանք:

Քննարկվող վույում նկատելի է զարգացած քաղաքական ափանցությունների աստիճանական անկում, փոխարենը՝ ցերպակետական բնույթի քաղաքական միավորների ձևավորում Մեյդո-ճարալի տարածքում: Այս գործընթացը լավ վկայված է ժամանակի գրավոր աղբյուրներում: Խոսքը այնպիսի պետականությունների մասին է, որոնք ասորեստանյան տեքստերում նշվում են *թյթ* «ստուն» բաղադրիչով: Այսպիսի քաղաքական կազմավորումները մեծ թվով են կազմում հատկապես Միրիայի, հյուսիսային և հարավային

Միջագետքի արամեաբնակ շրջաններում, ինչպես նաև Միջագետքից արևմուտք՝ իրանալեզու արեալում: Օրինակ, Բիթ Ադինի, Բիթ Ազուսի, Բիթ Յակին և այլն: Մյուսնց անունները կազմված են սույալ էթնիկական խմբի (ցեղի կամ ցեղամիության) անվանադիր նախնու անունից կամ ուղղակի ցեղանունից:

Որքան էլ որ տարօրինակ է, բարալյան կարևոր երկրներից մեկի՝ Բիթ-Բուրուտաշի անվանումը հենց այդպիսի կազմությամբ ունի: Ինչպես կարելի է բացատրել հին քաղաքական ավանդույթներով հարուստ այս արեալում նման ցեղապետական կազմավորման առկայությունը: Այս խնդրի կարևորությունը դժվար է վիճարկել, մանավանդ որ առկա են թարալում մ.թ.ա.VIIIդ. երկրորդ կեսի ընթացքում տեղի ունեցած ժողովրդագրական լարջ փոփոխություններ ակնկալող որոշ փաստեր:

Այսպես, հայտնի է, որ Թիգլաթաշալասար III-Սարգոն II ժամանակահատվածում տեղ գտած Ասորեստանի ստացիադազումը դեպի հայալային Փոքր Ասիա ուղեկցվում էր տեղի արքայատոհմերի վերագումով (տե՛ս վերը): Այս առումով հատկանշական է Թարալի օրինակը: Թարալի՝ ակնհայտ լավիական ծագում ունեցող արքա Վաստաարմասից հետո, մ.թ.ա.732թ. հետո ինչ-որ մի պահ այստեղ տեղի է ունեցել նախկին արքայատոհմի իշխանության վերագում: Սարգոն II-ը հայտնում է, որ մ.թ.ա.718թ. նա Թարալի արքա է նշանակել Ամբարիսին՝ Խուլլիի որդուն<sup>100</sup>: Այս Խուլլին, որն իր հերթին, վերահաստատված է եղել Թարալի արքա Սարգոնի կողմից, արքայալսան ծագում չի ունեցել<sup>101</sup>: Անդ որում, խոսելով Ամբարիսի մասին, Սարգոնը նշում է, որ վերջինս ծագում էր (?) Բիթ Ակուկանիայից<sup>102</sup>: Եթե սույն տեքստի վնասված հատվածը իսկապես ճիշտ է ընթերցված, ապա անհնար է խուսափել հետևյալ ենթադրությունից. Բիթ Բուրուտաշում Խուլլիով սկսվել է նոր՝ Բիթ Ակուկանիայից ծագող արքայատոհմի իշխանությունը: Բիթ Ակուկանիա անունը, անկասկած, պիտի ծագեր անվանադիր նախնու կամ ցեղի անունից: Եթե դա իրոք այդպես է, ապա մ.թ.ա. 730-ական թվականներից անմիջապես հետո Թարալի ամենասակնատու քաղաքական միավորում պիտի հաստատվեր օտար էթնիկական խումբ ներկայացնող մի հարստություն: Իսկ եթե

սրան ավելացնենք Ատունայի արքայատոհմի՝ հնարավոր մեկույցան ելքի օգտին վերը նշված վաստարկները, ապա կարող ենք հանգել մեկ այլ կարևոր ենթադրության. ամենայն հավանականությամբ, Ասորեստանի արքաները իրենք էին շահագրգռված օտար էրնիկական տարրի գերիշխանության հաստատումով Փոքր Ասիայի լուսիական արեալում: Այստեղ, հանդիպելով մշտական դիմադրության իրենց էքսպանսիային, նրանք ակնհայտորեն դիմում էին «եղբորդ ուժի» գործունի, ղեանով վտրձելով հակակշիռ ստեղծել տեղի ընդդիմադիր ուժերի դեմ: Այս ենթադրության օգտին են վկայում արդեն հիշատակված երկու վաստեր, այն է՝ Սարգոնի կողմից մ.թ.ա. 718 թ. բաբելյան երկու երկրների՝ պարտված Հիմախտուի տարածքի հանձնումը Ատունայի արքա Կուլտիսին և Խիլակկուի հանձնումը Բիթ Բուրուտաշի արքա Ամբարիսին՝ որպես Սարգոնի դստեր՝ Ախատ-արիչայի օժիտ: Այս երկու երկրների նկատմամբ Սարգոնի բարեհաճ վերաբերմունքը, անկասկած, նպատակ պիտի ունենար Թաբալում ստեղծել յուրատեսակ «մարիոնետային» պետություններ: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այս երկրները շատ արագ վտրձեցին դուրս գալ Ասորեստանի խնամակալությունից և գործում էին ինքնուրույն: Դրա վառ օրինակը Ատունայի և Բիթ Բուրուտաշի արքաների բանակցություններն էին Ասորեստանի հակառակորդ Ույարտուի և Մուշկի-Փոյուգիայի հետ:

Վերը ներկայացված վաստարկներին հօգուտ Թաբալում օտար՝ ոչ լուսիական արքայատոհմերի իշխանության հաստատման, կարելի է ավելացնել ևս մեկը: Այսպես, առաջին անգամ Բիթ-Բուրուտաշ ցեղանուն/երկրանունը հանդես է գալիս հենց Խուլլիի մասին պատմող Սարգոն II-ի տեքստում: Հենց այս շրջանից է ասորեստանյան տեքստերում հայտնվում Բիթ-Բուրուտաշ անվանումը, որը զուգահեռաբար կիրառվում է սոխանդական Թաբալի հետ միասին:

Այժմ կրկին անդրադառնանք Ասրանազյան-Թորգոմյան խնդրին: Մեր մոտեցումը այս խնդրին կարող ենք ձևակերպել այսպես:

Ասրանազյան-Թորգոմյան տարածքը կարող էր



ներկայացնել այն արեալը, որտեղ մախապես քաղաքական գեյթիշխանությունը գտնվել է առաջինների ձեռքում, իսկ հետագայում այն անցել է նրկորդներին: Վերը արդեն նշվեց նման ենթադրության օգտին վկայող մի փաստարկ (Մելիոյի արքա Մախուս - Առունայի արքա Ասխուհի) և Թեգարամայի արքա Գուրդի. նաև Շահունյաց Շուիրի անվան ենթադրվող կապը Մելիոյի արքայի անվան հետ):

Ի հավելումն սույն վարկածի փաստարկներին, կրկին անընդադառնաճառ Խորենացու առաջին Հայկյաններին: Խորենացու մոտ կարդում ենք. «*Եւ որ ինչ յարագս Արայի՝ կարճատօտիս և արջաչի շատ վիցի յիշատակեց: Սա կեցեալ ամս՝ ծնաւ գԿարդոս»* (ԺԵ): Այնուհետև՝ «*Այլ անդէն իսկ ի կենդանութեան իրում Շամիրամ գծնեալն ի Նուարդայ ի սիրելի կնոջէն Արայի, որ էր երկրատատան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, փասն առաջին իրաց իսանդադատանացն որ առ Արայն գեղեցիկ՝ կոչէ զանուն նորս Արայ, և կարգէ զնա ի վերակացութիսն աշխարհիս ...»* (Ը): Նույնը ավելի համառոտ՝ Գրասխանակերտցին. «*Իսկ շուայտոտն Շամիրամ տակս առաջին իրոյ իսանդադատանացն առ Արայն կոչէ զանունն Կարդոսի յանուն հօր իրոյ Արայ, կարգելով զնա ի վերակացութիսն աշխարհիս Հայոց ...»* (Էջ 19):

Նշանակում է, Արայան Արայի իսկական անունը Կարդոս է եղել և Շամիրամին է վերագրվում նրա վերանվանման գործը: Հր.Աճառյանը Կարդոս անունը համադրում էր ասորական Կարդոնի հետ<sup>26</sup>: Գ.Ջախուկյանը հակված է այն ստուգաբանելու արքադերենի օգնությամբ, դիտելով Կարդոսը որպես մակդիր<sup>27</sup>: Թե ինչ հիմքեր կան նման մեկնաբանությունների համար, այնքան էլ պարզ չէ, սակայն այստեղ առավել կարևոր է Կարդոս և Գուրդի անունների ակնառու նմանությունը: Այս համադրությունը կարող էր պատահական նմանություն ունենալ, եթե Գուրդի անունը կրող անձնավորությունը չլիներ Թիզգարիմնուի արքան, նույն անունը կրող արքան (ինադալիոր է, նույն անձնավորությունը) չկատարարեր Մաժար-Կեսարիայի և Արգեոս լեռան շրջանում (որտեղ տեղադրվում են հոմերոսյան *արխանները*):

Գծրախոտաբար, մինչև օրս առաջին Հայկյանների կապը

անդրեփրատյան գոտու հետ ուղղակի չի քննարկվել, քանի որ հայ մատենագիրները բոլոր նահապետների գործունեությունը բացառապես տեղադրել են բուն Հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի ափագանում և Այրարատում: Գրանով իսկ երկրորդ սլան է մղվել մի տարածք, որի հետ բախական վաղ առնչություններ են վկայված (տե՛ս սույն աշխատության Ներածությունը):

## ՀՏԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատության եզրափակիչ մասում անհրաժեշտաբար հստակում է Մելիդ-Թեգարամայում ուսումնասիրվող դարաշրջանում տիրող էթնիկական իրավիճակի խնդիրը: Վերը արդեն նշվեց, որ մասնագետները տվորաբար Թիլզարիճնուի կառավարիչ Գուրլիին փորձել են առնչել փոյուզական էրնուսի հետ: Ն.Ադոնցը, Ի.Դյակոնովը սրանց համարել են արևմտյան Փոքր Ասիայից՝ փոյուզական արեալից արևելք տեղաշարժված հայալեզու մի խումբ, որը հետագայում մուտք է գործել բուն Հայկական լեռնաշխարհ: Մակայն, ինչպես ցույց տրվեց վերը, այդ ենթադրությունը որևէ լուրջ փաստական հիմնավորում չունի: Ավելին, այսօր բավարար հիմքեր կան ենթադրելու մ.թ.ա. IX-VIII դդ. արևելքից արևմուտք ընթացած ժողովուրդների տեղաշարժեր, որոնց ալիքը կարող էր հասնել ընդհուպ մինչև Փոյուզիա<sup>107</sup>:

Այսպիսով, ներկայացված աշխատության մեջ քննարկված տարաբնույթ նյութերի ուսումնասիրության արդյունքում ստացված եզրակացությունները հարկադրում են առաջարկելու հայոց մատենագրության մեջ ներկայացված Հայկյանների ալանդագրույցի բաղկացուցիչ մասերի տարակենտրոն մոդել: Ըստ դրա, նախատակահարմար է Հայկյան նահապետներին դիտել որպես Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում գտնվող քաղաքական միավորների ցեղապետ-կառավարիչներ: Վերջիններից մեկի, այն է՝ Արայան Արայի (Կարդոս-Գուրլի) տեղայնացումը անդրեփրատյան Մելիդ-Թարալի տարածքում, ալիլի հիմնավոր փաստարկների դեպքում, կարող է եսկան ճշգրտումներ մտցնել Հայկյանների պատմականության, ինչպես նաև Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրների բնույթի պարզաբանման խնդիրներում: Անհրաժեշտ ենք հասնարում նշել, որ Արայան Արա(Կարդոս)-Գուրլի գուգահեռը միակը չէ առաջին Հայկյանների հնարավոր անդրեփրատյան աղերսների շարքում, ինչը կքննարկվի մեկ այլ աշխատության մեջ:

## ՆԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս տարածաշրջանի հետ են ամփոփում հայոց երկու ցեղամուկները (հայ և արմեն), այստեղից են, ըստ Պատմահոր, Հայկի սերունդները ցրվել Առնաշխարհի տարբեր շրջաններ (Արամանյակը), այստեղ են գտնվել հայոց հեթանոսական դիցարանի շատ աստվածների պաշտամունքի կենտրոնները, այստեղ է գտնվել հայոց Արշակունիների տոհմական դամբարանը (Դարանաղաց գավառի Անի ամրոցը), Շահունյաց Մուխրի Բնաբեղ ամրոցում է պահվել հայ Արշակունիների գանձարանը, և այլն:

2. **Fr. Delitzsch.** *Wo lag das Paradies?*. - Leipzig, 1881, S.246 (իղվում է ըստ Հ.Մանանդյան. *Նրկեր*. Ա, Երևան, 1977, էջ.16): Հեղինակը «Տուն Թորգոման» նույնացնում էր կիմմերների հետ: Հայ ժողովրդի կազմավորման հարցի շուրջ ամբաստանագիտական կարծիքների հանգամանալի տեսության համար՝ Լ.Ա.Բարսեղյան. *Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտարան մեջ*, - Եր., 1996, էջ.140-260:

3. Աստուածաշունչ, Եզեկիէ, ԻԷ, 14; ԼԸ, 6.

4. Հ.Մանանդյան. *Նրկեր*. Ա, էջ.21-31:

5. **И.М. Дьяконов.** *ПАН*, с.199ссл.; *Малая Азия и Армения около 600г. до н.э. и северные походы вавилонских царей*, "ВДИ" 1981, 2, с.51ссл.

6. **Гр.Капанцян.** *Хайаса-колыбель армян*, Ереван, 1947, с.140ссл.

7. Ս.Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի սրայբարը քոչվորների դեմ, «ՊԻՀ», 1968/2, էջ.109.

8. **Г.А.Меликишвили,** *УКН*, 278,4.

9. Թա/եզարանա քաղաքը կիմարեկյան գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. XX-XVIII դդ. Բիլազրվոդ Աշշուրի «Իսապատրվիական աղյուսակներում» (H. Lewy, *Notes on the Political Organization of Asia Minor at the time of the Old Assyrian Texts*, "Orientalia" 33, 1964, fasc.2-3, p.195, n.3): Այնուհետև, սկսած մ.թ.ա. XVI դարից, այն կանոնավոր վկայված է խեթական

աղբյուրներում (տես G.F.del Monte und J.Tischler, *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte (RGTC 6)*, Wiesbaden, 1978, S.257f.):

10. **Գր.Халатьянц**, *Очерк истории Армении*, Москва, 1910, с.11; J.Markwart, *Le berceau des Arméniens*, "REA" VIII, 1928, fasc.2, p.211ff.; **И.М.Дьяконов**, *ПАН*, с. 204ссл.; J.P.Mallory, *In Search of the Indo-Europeans*, London, 1989, p.34f., և այլն: Ա.Երեմյանի իր վաղ շրջանի հոդվածներից մեկում (Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «ՊԲՀ», 1958/3, էջ.59) նշում է մ.թ.ա.XIV-XIIIդդ., սակայն ավելի ուշ (Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VIդդ. մ.թ.ա.), «ՊԲՀ», 1968/3, էջ.91) մ.թ.ա.XIIդ.:

11. Սյուր Հայկական լեռնաշխարհում հնդեվրոպական երնիկական տարրի առկայությունը առնվազն մ.թ.ա.III հազարամյակում հալաստող քաղաքի մեծաքանակ հնագիտական տվյալներ կան (**Sh.M.M.Winn**, *Buried Evidence and the Kurgan Culture in Eastern Anatolia c.3000 B.C.: an Interpretation*, "JES" 9, 1981, Nos. 1/2, p.113ff.; **J.Yakar**, *The Indo-Europeans and their Impact on Anatolian Cultural Development*, "JES" 9, 1981, Nos. 1/2, p.94ff.; **Գ.Ե.Арешян**, *Индоевропейский сюжет в мифологии населения Междуречья Куры и Аракса II тысячелетия до н.э.*, "ВДИ" 1988/4, с.84ссл.; **Ch.Burney**, *Arslantepe as a Gateway to the Highlands: a Note on Periods VIA-VID.* - In: "Between the Rivers and the Mountains" (eds.M.Frangipane et al.), Roma, 1993, p.311ff.):

12. **Գր.Капанцян**, *Хайоса*; Գ.Բ.Ջուհուկյան, *Հայոց լեզվի արևմտյան Նախազրույցի շրջան*, Երևան, 1987, էջ.340-341; Գ.Խ.Սարգսյան, *Ուրարտիական տեղանուններ և հայերը.* - «Ուրարտե-Հայաստան», Երևան, 1988, էջ.51-52.

13. Սյու մասին տես Ա.Լ.Քոսյան, «Արեւելյան» և «արեւմտյան» մտերիկի խնդիրը, «ՊԲՀ», 1996/1-2, էջ.207-220; Նույնի Իսրայիլի (Եռիթր) մ.թ.ա.XIII-XII դդ., «ՊԲՀ», 1997/1-2, էջ.177-192.

14. Հ.Մանանդյան, *Երկեր*. Ա, էջ.13-29; **Գր.Капанцян**, *Хайоса*, с.154ссл.

15. **Գր.Капанцян**, *Хайоса*, с.140ссл.

16. **И.М.Дьяконов**, *ГАН*, с.180слл.; "ВДИ" 1981/2, сс.50-63; Վաղ շրջանի ոստանաախրողների կարծիքով, հայ-արմենների մուտքը արևելյան Փոքր Ասիա պիտի բվագրել մ.թ.ա.VIIIդ. վերջին քառորդով: Նրանք հակված էին այս իրողարծությունը դիտելու դեպի հարավ-արևելյան Փոքր Ասիա Փոյուզիայի ոսգմարա-դարական էրսպանսիայի ենբատեքստում. ըստ նրանց, Թիզգա-րիմնուի կատախարիչ Գուրդին այս հայկական ցեղերի առաջնորդն է եղել (օրինակ, **E.Forrer**, *Die Provinzeinteilung des assyrischen Reiches*, Leipzig, 1921, S.80f.; Ն.Արունց, *Հայաստանի պատմություն*, Եր., 1972, էջ 311):

17. Այս տեսության մասին տես **J.D.Hawkins**, *Kuzi-Tešub and the "Great Kings" of Karkamiš*, "AnSt", 38, 1988, p.99ff.; **H.G.Guterbock**, *Survival of the Hittite Dynasty*. - In: "The Crisis Years: the 12th Century B.C. From Beyond the Danube to the Tigris" (eds.W.A.Ward and S.Joukowsky), Dubuque, 1992, p.53ff.; **J.Yakar**, *Anatolian Civilization Following the Disintegration of the Hittite Empire: an Archaeological Appraisal*, "Tel Aviv" 20, 1993, p.3ff.; Ա.Վ.Քոսյան, «ՊԲՀ», 1996/1-2, էջ.207-220.

18. **K.Bittel**, *Die archäologische Situation in Kleinasien um 1200 v.Chr. und während der nachfolgenden vier Jahrhunderte*. - In: "Griechenland, die Ägäis und die Levante während der "Dark Ages" vom 12. bis zum 9.Jh. v. Chr. Akten des Symposions von Stift Zwettl (NO) 11.-14. Oktober 1980" (Hrsg. von S.Deger-Jalkotzy), Wien, 1983, S.25-47.

19. **J.D.Hawkins**, "AnSt", 38, p.99ff.

20. Սելդիի հիերոգլիխային արծանագրությունների հրատարակությունը տես **P.Meriggi**, *Manuale di Eteo Geroglifico*, Parte II: Testi - 2ª e 3ª serie (Incunabula graeca, vol.XV), Roma, 1975, No.97-119.

21. Ա.Վ.Քոսյան, *Ուշխերական Սելդի պետությունը (ըստ հիերոգլիխային լուխական աղբյուրների)*, «Լյսաբեր հասարակական գիտություններ», 1984/6, էջ.62-70.

22. **D.D.Luckenbill**, ARAB I, 610.

23. ARAB I, 580.

24. **Г.А.Меликишвили**, *УКН*, 39.

25. Там же, 127 II 5-6.

26. Տեքստում երկրանվան փոխարեն առկա է Թարալի աչքի ընկնող երկունքից մեկի՝ ավելի ուշ շրջանում վկայված Բիր-Բուրս-տաշի արքաների դինաստիական անունը - Տուվատիս (Tustchi):

27. Այս մասին հաղորդվում է Թիզլարսպարսասար III-ի տեքստերում, որտեղ Սեկիլը հիշատակվում է որպես Ուրարտուի դաշնակից (ARAB I, 769, 797):

28. Ասորեստանի և Ուրարտուի միջև այս փուլում ընթացած սուր հակամարտության մասին (ARAB I, 769, 797, 800) տե՛ս **H.Tadmor**, *Assyria and the West: the ninth century and its aftermath*. - In: "Unity and Diversity" (eds. H.Goedicke and J.J.M.Roberts), Baltimore and London, 1975, p.37ff.; **M.Wäfler**, *Zum assyrisch-urartäischen Westkonflikt*, "Acta praehistorica et archaeologica" 11/12, 1980/1, S.93ff.:

29. ARAB I, 769, 797, 800.

30. ARAB I, 772.

31. Բացառություն է կազմում միայն հյուսիսսիրիական Ունքի/Պատտիմը, որը մ.թ.ա.738թ. վերածվեց ասորեստանյան մարզի (ARAB I, 769):

32. ARAB II, 25, 27, 55, 214 ~ այլն:

33. ARAB II, 55.

34. ARAB II, 24, 25, 55.

35. **F.Thureau-Dangin**, *Une relation de l' huitième campagne de Sargon II*. Paris, 1912; այս արչախանքի հանգանակալի վերլուծությունը տե՛ս **Н.В.Арутюнян**, *Бисайиши*, Ереван, 1970, с.292ссл.

36. ARAB II, 16, 18.

37. ARAB II, 25, 55.

38. ARAB II, 79, 92, 99.

39. ARAB II, 27, 45.

40. **J.N.Postgate**, *Assyrian Texts and Fragments*, "Iraq" 35, 1973, p.21ff.

41. Նախկինում Ասորեստանի տեղադրվում էր Կիլիկյան Դարպասների շրջանում (**E.Forrer**, *Loc.cit.*, S.72; **P.Hulin**, *The Inscriptions on the carved throne-base of Sargon III*, "Iraq" 25, 1963, p.66ff., և այլն), սակայն հետազայում, հիմնավոր փաստարկների ճնշման տակ, այն տարվեց հյուսիս՝ Հայխ-

Կրկրկրմակի մեծ դրամի շրջան (J.D.Hawkins, *Some Historical Problems of the Hieroglyphic Luwian Inscriptions*, "An.St." 29, 1979, p.166):

42. ARAB I, 772, 801; J.D.Hawkins and J.N.Postgate, *Tribute from Tabal*, "State Archives of Assyria. Bulletin" II/1, 1988, p.31ff.

43. ARAB II, 214.

44. J.N.Postgate, "Iraq" 35, 1973, p.21ff.

45. P.Meriggi, *Manuale di Eteo Geroglifico*, Parte II: Testi - 1ª serie (Incunabula graeca, vol.XV), Roma, 1967, No.28 (Tav.LI); A.Morpurgo-Davies and J.D.Hawkins. *The Hieroglyphic Inscription of BOHÇA*. - In: "Studia Mediterranea" (ed.O.Carruba), Pavia, 1979, p.389ff.:

46. P.Meriggi, *Manuale di Eteo Geroglifico*, P.II: Testi - 2ª e 3ª serie, Nos.68, 69, 70: Այստեղ հիշատակվում են Կուրտիսը և Խարիսար լեռը (սմտվել արդյունքների Արգեոսը, ժաման. Էրթիյասը):

47. ARAB II, 45, 64.

48. J.D.Hawkins, *The Neo-Hittite States in Syria and Anatolia*. - In: "CAH" III/1, p.420.

49. I.M.Diakonoff, *The Pre-History of the Armenian People*, Delmar/New York, 1984, p.90.

50. И.М.Дьяконов, ПАН, с.169.

51. A.K.Grayson, *Assyrian and Babylonian Chronicles*, Locust Valley/New York, 1975, p.76.

52. H.Tadmor, *The Campaigns of Sargon II of Assur: a chronological-historical study*, "JCS" 12, 1958, p.97, n.311; J.D.Hawkins, "CAH" III/1, p.422.

53. S.Parpola, *The Correspondence of Sargon II, P.I: Letters from Assyria and the West*, Helsinki, 1987, p.70 and n.76.

54. J.D.Hawkins, *The Kuluwa Local Strips*, "AnSt" 37, 1987, Index.

55. ARAB II, 329, 340.

56. A.K.Grayson, *Assyrian and Babylonian Chronicles*, pp.83, 126.

57. ARAB II, 911.



58. **И.М.Дьяконов**, "ВДИ", 1981/2, с.60.

59. Ի. Գյակոնովն ուղղակի ենթադրում է, որ Ատտոնայի արքա Կուրտիաը ոչ այլ որ է, քան Փոյուզիայի արքա Միդասի հայր Գուրդիու 1-ը ("ВДИ", 1981/2, с.57): Ս.Երեմյանի կարծիքով, Սինաքերիբի հիշատակած Գուրդին Փոքր Ասիայի արևելքում Փոյուզիայի էրսպանսիայի շրջանում Թիլզարիմում Միտա/Միդասի կողմից նշանակված կառավարիչ է եղել, հավանաբար, փոյուզական արքայատոհմի ներկայացուցիչ («ՊԲՀ», 1968/2, 107-108): Այս մասին հասցամանորեն տտրև:

60. Այս տերմինը, որ կիրառության մեջ էլ դրվել 1950-ական թվականներին (**E.Akurgal**, *Phrygische Kunst*, Ankara, 1955) և պայմանականորեն ընդունվել մասնագետների կողմից, իրականում որևէ առնչություն չունի կենտրոնական և արևելյան Փոքր Ասիայի նախնական փուլի տեղական մշակույթի հետ (տե՛ս տտրև):

61. Մեսագլուական համակարգում չկան հստակ նշաններ օ-ի համար: Ինչ վերաբերում է Kurtis ձևին, ապա փոքրասիական հիերոգլիֆիկայում չեն տարբերակվում խուլ և հնչեղ բաղաձայնները, այսինքն, Կուրտիս անունը կարող էր իրականում հնչել Գուրդիս:

62. Տե՛ս **G.D.Summers**, *Grey Ware and the Eastern Limits of Phrygia*. - In: "Anatolian Iron Ages 3. The Proceedings of the Third Iron Ages Colloquium held at Van, 6-12 August 1990" (A. Çilingiroğlu and D.H.French), London, 1994, p.241ff.

63. **M.J.Mellink**, *Mita, Mushki and Phrygians*, "An Ar" 2, 1965, p.317ff.

64. Idem; **И.М.Дьяконов**, "ВДИ" 1981/2, с.57.

65. Keilschriftkunden aus Boghazköi, XXIII 72 (Հրատարակությունը՝ O.R.Gurney, *Mita of Palhuwa*, "Annals of Archaeology and Anthropology" 28, 1948, p.32ff.):

66. **M.J.Mellink**, "An Ar" 2, 1965, p.317ff.

67. Փոյուզիայի և փոյուզացիների մասին անտիկ աղբյուրների պահպանած տեղեկությունների տեսությունը տե՛ս **R.D.Barnett**, *Phrygia and the Peoples of Anatolia in the Iron Age*. - In: САН" II, ch.XXX, 1969, p.3; **L.E.Roller**, *The Legend of Mides*,

"Classical Archaeology" 2, 1983, p.299ff.; **T.A.Моисеева**, *К интерпретации историко-географических представлений о Фригии в гомеровском эпосе*, "ВДИ", 1985, 3, с.66ссл., և այլն:

68. Հունական աշխարհի և Փոյուզիայի միջև մ.թ.ա.VIII դարում և ավելի վաղ զոյորյուն ունեցած քաղական սերտ կապերի մասին տե՛ս **O.W.Muscarella**, *King Midas of Phrygia and the Greeks*. - In: "Anatolia and the Ancient Near East" (eds.K.Emre, B.Hrouda, M.Mellink and N. Özgüç), Ankara, 1989, p.333ff.

69. Բոլոր այդ տեղանունների և նրանց տեղադրությունների համար տե՛ս **T.A.Моисеева**, "ВДИ", 1985, 3, с.73:

70. Նույն տեղում:

71. Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ որոշ մասնագետներ հակված են <sup>URU</sup>Atriyա քաղաքը համարելու հոմերոսյան Տրոյայի նախատիպը (**J.G.Macqueen**, *Geography and History in western Asia Minor in the second millennium B.C.*, "AnSt" 18, 1968, p.169ff.; **D.F.Easton**, *Hittite History and the Trojan War*. - In: "The Trojan War. Its Historicity and Context. Papers of the First Greenbank Colloquium, Liverpool, 1981" (eds.L.Foxhall and J.K.Davies), Bristol, 1984, p.34f.):

72. Агг. II 3, 2-6.

73. Նման կարծիք ժամանակին հայտնել է Ռ.Գ.Քարնեոլը (*The Sea Peoples*. - In: "САН" II, ch.XXVIII, 1967, p.14):

74. **И.М.Дьяконов**, "ВДИ" 1985, с.57.

75. KULULU I " ÇİFTLİK (Տուվառիա, կազմված են կախյալ կառավարիչների կողմից), TOPADA (Վասուսարմաս): Այս արբաները կրում են «մեծ արբա» տիտղոսներ, ընդ որում սրանցից երկրորդը ժամանակագրորեն մոտ է Ատտունայի արբա Կուրտիսին. նա հիշատակվում է Կուրտիսի հոր հետ Թիզլարպալասար III-ի միևնույն տեքստերում (ARAB I, 772, 801):

76. A 6 և A 15b (**P.Meriggi**, *Manuale, Testi - 1<sup>o</sup> serie*, No.10, 11, Tav.I, II).

77. KARATEPE. (**P.Meriggi**, *Manuale, Testi - 1<sup>o</sup> serie*, No.24).

78. **J.D.Hawkins**, "AnSt" XXIX, 1979, p.162ff.

79. Հիշյալ հեղինակների տեղեկությունների համադրումը ըստ

A.J.Spaulinger, *The Date of the Death of Gyges and its Historical Implications*, "JAOS" 98, 1978, n.4, p.403.

80. Այդ աղբյուրների համեմատական վերլուծությունը տե՛ս **Т.А.Моисеева**, *Царская Власть у фригийцев*, "ВДИ", 1982/1, с.119сл.

81. Там же, с.123.

82. **O.W.Muscarella**, *Phrygian Fibulae from Gordion*, London, 1967, p.7.

83. Եթե դառնելու լինենք դատական շրջանի փոյուզական մշակույթին բնորոշ գորշ միազույն խեղդեղենի հիման վրա, ապա փոյուզացիների սուտըր Գորդիոն պիտի թվագրել մ.թ.ա.X դարից ոչ վաղ (տե՛ս **J.Mellaart**, *Troy VIIA in Anatolian Perspective*. - In: "The Trojan War", pp.67f.; **R.C.Henrickson**, *Continuity and Discontinuity in the Ceramic Tradition of Gordion During the Iron Age*. - In: "Anatolian Iron Ages. 3", p.109f.; Ա.Վ.Քոսյան, «ՊԻՆ», 1996/1-2, էջ.210-214):

84. **G.D.Summers**, In: "Anatolian Iron Ages.3", p. 241ff.

85. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն» (Ներածություն), Եր., 1990; Գ.Խ.Սարգսյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»*, Եր., 1991, էջ 9-23; նույնի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, «ՊԻՆ», 1992/2-3, էջ.27-50:

86. **Н.О.Эмин**, *Династический список хайкидовъ в истории Моисея Хоренского и хронологическая их таблица у О.Михаила Чамчяна*, М., 1884, с.31сл.

87. Գ.Ր.Տառուկյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի ամենամասնների լեզվական աղբյուրները*, «ՊԻՆ», 1981/3, էջ.61-63:

88. Ոյսպես ասվածի հիմնավորում կարելի է նշել քննուզ այն փաստը, որ առաջին Հայկյանների անունները չեն հանդիպում վաղ միջնադարյան հայկական իրականության մեջ:

89. Ա.Պետրոսյան, *Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և Խորոց ազգամազանի խնդիրը*, Եր., 1997, էջ.36-64:

90. Մեր կարծիքով, այն մի շարք փաստարկները, որոնք

սովորաբար վկայակոչվում են «ուրարտական» վարկածի օգտին (Մենուայի շինարարական գործունեությունը Խորենացու կողմից Շամիրամին վերագրելը, Ուրարտուի արքա Արամե/ուի և Արամի անունների նմանությունը, Արամ նահապետի և Արգիշտի I-ի նվաճումների աշխարհագրական աղեղսները և այլն), միայն առաջին հայացքից են հիմնավոր բվում: Եթե Ուրարտուն է եղել Խորենացու Հայկյանների երկիրը, ապա դժվար է պատկերացնել, որ Պատմահայրը կարող էր անտեղյակ լինել Առաջավոր Ասիայի քաղաքական և մշակութային կյանքում այս հզոր պետության ունեցած մասնակցությանը: Այսուհանդերձ, Խորենացու երկում որոշակի ուրարտական շերտի առկայությունը չի կարելի քաջատել: Սակայն տվյալ պարագայում խոսքը ոչ թե Ուրարտուի արքաների և հայկյանների միջև ուղղակի համապատասխանությունների հայտնաբերման, այլ Ուրարտական տեղության քաղաքական կյանքի համատեքստում վաղ հայկական էթնոսի խաղացած դերի, նրանց փոխհարաբերությունների մասին է: Յուրաքանչյուր անգամ քննարկելով այս խնդիրը, անհրաժեշտ է հիշել, որ Ուրարտուն և Հայկյան նահապետների քաղաքական միավոր(ներ)ը տիպաբանորեն տարբեր երևույթներ են:

91. Հատուկ անունների խորենացիական ստուգաբանությունների մասին տե՛ս Գ.Խ.Սարգսյան, *Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ*, «ՊԲՀ», 1998/1-2, էջ.113-128 և «ՊԲՀ», 1998/3 (կրատ.ընթ.):

92. Համեմատաբար վերջերս քախական ուշագրավ վարկած առաջ քաշվեց Ս.Հմայակյանի կողմից (Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիրչա քաղաքը Նիբուրի լեռներում, «ՊԲՀ», 1992/1, էջ.125-132): Հեղինակը բերում է մի շարք լուրջ փաստարկներ հոգուտ Հայկի տեղաշարժերին Բաբելոնից դեպի հյուսիս Ասորեստանի արքա Թիգլաթպալաստար I-ի ժամանակներում:

93. **Г.А.Меликишвили**, УКН, N.158: <sup>1</sup>Hi-la-ru-a-da-ni <sup>2</sup>Šá-hu-hi LUGÁL URU/Me-li-tè-al-hi-e KUR-ni-e te-e-qu-ni «(նա հարկեց) Շախուլի որդի Խիլարուադային՝ Մելիտեայի արքային»: Համադրության համար տե՛ս **H.Th.Bossert**, *Die Felsinschrift von Širzi*, "Archiv für Orientforschung", Bd.XVII, 1954/55, T.1, S.68. **ՏՐԶԻ**-ում Սախուսի

անունը գրված է այսպես՝ Sa-REL<sub>2</sub>-sa, որը կարելի է տառադարձել որպես Սախա(ախ)ա:

94. P.Meriggi, *Mesopotam. Texts 3<sup>rd</sup> serie*, N.119.

95. Վերջերս այս անունը, որոշ վերաստեղծմաներով, առաջարկվել է ընթերցել Sati-Runtijas (J.D.Hawkins, *Melid. - In: "Reallexikon der Assyriologie"*, Bd.VIII, 1997, p.41): Հ.Թ.Բոստրոփ կարծիքով ("Archiv für Orientforschung", Bd.XVII, 1954/55), ՏՐԶԻ-ի հեղինակը ուրարտական տեքստերի հիշատակած Սելիդի արքա Խիլարուադայի ավագ եղբայրը կարող էր լինել:

96. Այս անունը տարբեր ձևերով է հանդես գալիս մատենագիրների մոտ (տե՛ս Н.Адонц, *Армения в эпоху Юстиниана*, Ер., 1971, с.38, прим.2). Բ.Հարությունյանի կարծիքով, սա Խորենացու հիշատակած «Ճոխաց աշխարհն» է, որի Բնարեղ ամրոցում էր գտնվում հայոց Արշակունիների գանձարանը («Աշխարհացոյց»-ը և յորս Հայքերի խնդիրը, Եր., 1997, էջ 60):

96ա. Гр.Капанцян, *Хайаса*, с.149 прим.1.

97. Гр.Капанцян, *Хайаса*, сс.147-153; Ն.Արսենյը հակված չէր որևէ էական դեր վերագրելու կիմմերա-սկյութական տարրի ենթադրվող ավանդյուն հայոց էրնոգենեզի գործում (Հայաստանի պատմություն, էջ.303-305):

98. Ф.Тер-Мартirosов, *Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруйре Скайорды как царе Армении*, "ИФЖ", 1994/1-2, сс.67-84.

99. «Աշկենագի րագավորությունը» գերագանգապես տեղադրվում է Կորի աջախնջակում Սախասենեում (Б.Б.Пиотровский, *Ванское царство*, М., 1960, с.245; И.М.Дьяконов, *История Мидии*, М.-Л., 1956, с. 281 և այլն):

100. Գ.Ր.Տահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, էջ.339: Հեղինակը այս բրակացիներին ենթադրաբար տեղադրում է վերինեփրատյան Հայաստանի տարածքում:

101. Վ.Վ.Ինգլիզյան, *Հայաստանի Սուրբ Գրքի մեջ*, Վիեննա, 1947, էջ 207: Նա գտնում է, որ Ասրանագի ալանություն միջոցով մեր մատենագիրները ցանկացել են հիմնավորել փոյուզացիների հետ հայերի ունեցած ազգակցական կապը: Նույն կարծիքին էր

Հ.Սամանյանը (Երևեր. Ա, էջ.17):

102. ARAB II, 55.

103. ARAB I, 802; Խուլլին նշանակվել էր արքա մ.թ.ա.732-729թթ. միջև՝ Թիգլատպալասար III-ի կողմից, այն ըսանից հետո, երբ Թաբալի լավիական արքա Վաստրոմեն (հիերոգլ. լավիական TOPADA կոչվող արձանագրության Վաստասարմասը) դադարել էր հարկ առաքել Ասորեստան: Հետագայում, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, Սալմանասար V-ը (մ.թ.ա.726-722թթ.) Խուլլին ձերբակալել և տարել էր Ասորեստան, իսկ Սարգոն II-ը նրան կրկին վերադարձրել էր Թաբալ (տե՛ս M.Wülfel, *Zu Status und Lage von Tabal*, "Orientalia", vol.52, fasc.1, 1983, S.183f. ):

104. ARAB II, 24.

105. Հր.Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ.Բ, Եր., 1944, էջ.613:

106. Գ.Բ.Ջահուկյան, «ՊԹՀ», 1981/3, էջ 55: Հեղինակը այս անվան հիմք է դիտում արքադերեմ գաճա «ոմեղ, հզոր, քաջ» բառը, չնայած չի բացատրում նաև դրա կապը անտիկ աղբյուրների *καρδοουχοι* ցեղանվան հետ:

107. M.J.Mellink, "AnAr", II/1-2, p.318ff.; J.Macqueen, *The Hitites and their Contemporaries in Asia Minor*, Boulder/Colorado, 1975, p.57; Այժմ այս տեսակետը նոր, հզոր հիմնավորում է ստացել ի դեմս այսպես կոչված «նուշկական» խեցեղենի արևելյան օջախի (Հայկական լեռնաշխարհ) (տե՛ս Ա.Գոսյան, «ՊԹՀ», 1996/1-2, էջ.207-220):

## ՀԱՐԱՆՈՏԻՄԻՔՅՈՒՈՒՄ

- ՊԹՀ - *Պատմագրությունների հանդես*.  
ВДИ - Вестник древней истории.  
ИФЖ- ՊԹՀ.  
ПАН - И.М.Дзяконов, Предыстория армянского народа, Ер., 1968.  
УКН - Г.А.Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.  
An Ar - Anadolu Araştırmaları.  
AnSt - Anatolian Studies.  
ARAB - D.D.Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, vols.I-II, Chicago, 1926-1927.  
CAH - Cambridge Ancient History.  
JAOS - Journal of the American Oriental Society.  
JCS - Journal of Cuneiform Studies.  
JIES - The Journal of Indo-European Studies.  
REA - Revue des Études Arméniennes.

## ԲՈՒՄԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ներածութիւն	5
ՍԵԼԻԴ-ԹԵԳՄՐԱՄԱՆ Մ.Թ.Ա.XII-VIIIԴԴ.	11
ՍԵԼԻԴԸ Մ.Թ.Ա.VIIIԴ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ	14
ԱՏՈՒՆԱՆ Մ.Թ.Ա.VIIIԴ. ԿԵՐԶԻՆ ԶԱՌՈՐԴՈՒՄ	18
ԹԱԲԱԼԸ ԵՎ ՍԵԼԻԴԸ Մ.Թ.Ա.705-695ԹԹ.	28
ԹԱԲԱԼ-ՍԵԼԻԴԻ ՆՈՐ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԻ ԽՆԴԻՐԸ	33
ՓՈՅՈՒԳԻՎ ԵՎ ԱՏՈՒՆԱ	39
ԱՌԱՋԻՆ ԴԱՅԿՅԱՆՆԵՐԸ ԵՎ «ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱՆ»	46
<i>Դայկյանների պատմության աղբյուրները</i>	46
<i>Դայկյանների պատմականությունը</i>	
<i>և գործունեության տեղայնացումը</i>	48
«ՏՈՒՆ ԹՈՐԳՈՄԱՆ» ՎԱՐԿԱԾ	55
ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ	66
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	67
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	78



A <sup>11</sup> / 85072



# ԱՐԱՄ ԻՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու  
ԿՄ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի փոխաբերեն

Նաև Մոսկովյան Ասիայի պատմության մասնագետ: Գիտական առարկանախոսարարականը ընդգրկում են ճ.թ.ա. II - I հազարամյակների Փոքր Ասիայի և հայասկից շրջանների պատմության պարբեր հոդոցներ: Նդիմով է երկու մենագրության և շուրջ երեք տասնյակ հոդվածների, որոնք հրատարակվել են Տայաստանում, Թուրստանում, ԱՄՆ-ում և Լվրտպական երկրների գիտական պարբերականներում: